ԽԱՉԱՏՈՒՐ ԳԱՂԱՏԱՑԻ ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ (1606-1674)

Մերուժան Կարապետեան

Խաչատուր Գաղատացին Կղեմէս Գալանոսի Պոլսում եղած ժամանակ համառօտ մի շրջան աշակերտել է նրան: Խուսափելով շօշափել դաւանաբանական հարցերը, ստորեւ կը փորձենք համադրել Հաւատասփիւռի ժողովի դիւանի փաստաթղթերը վերհանելու Խաչատուրի կենսագրութեան այն դրուագները, որոնք ցայսօր մնացել են անյայտ կամ դիտուել երկրորդական:

Խաչատուր Գաղատացին «Կ. Պոլսի պատրիարք».

Կ. Պոլսի Կիրակոս Երեւանցի պատրիարքը վախճանուեց 1642 թ. յունիսի կէսերին 37 տարեկան հասակում: Լատին միսիոներ Կղեմէս Գալանոսի համաձայն յաջորդող թեկածուները երեքն էին. մեկը իր աշակերտներից Խաչատուրը, միւսը՝ Թովմա Բերիացին, որոնք դիտւում էին համակիրներ Հռոմի աթոռին եւ նրանց հակառակ՝ նախկին պատրիարք Դաւիթ Արեւելցին[1]:

Գալանոսը 1642 թ. օգոստոսի 10-ի իր նամակով Հաւատասփիւռի ժողովի կարդինալներին տեղեկացնում է, որ 13 օր առաջ պատրիարքական աթոռը զբաղեցրեց 36-ամեայ Խաչատուրը, որ իր նախորդի նման «մեծ ցանկութիւններ ունի եկեղեցիների միութեան»: Իր դիրքն ամրապնդելու գործերով զբաղուած լինելով, Հռոմի հետ հաղորդակցուելու թուղթը կ'ուշանայ, սակայն ընտրութիւնից յետոյ, իր որդիներից մեկին (քանի որ նախապէս ամուսնացած էր) ուղարկում է ֆրանսիական դեսպանի մօտ, որն էլ իր կարգին իր քարտուղար Lampror-ին ուղարկում է Խաչատուրի մօտ: Կիրակոսի մահից յետոյ պատրիարքական աթոռն առաջարկուել էր Դիարբեքիրի Յովհաննէս արքեպիսկոպոսին, որ յանձն է առնում ի դէմս իր աշակերտ Խաչատուրի[2]:

Ֆրանսիայի դեսպանը 1642 թ. օգոստոսի 15-ի նամակով գոհունակութեամբ տեղեկացնում է այս լուրերն Հաւատասփիւռի ժողովի կարդինալ Բարբերինիին, աւելացնելով թէ իր նախորդի նման նոյն առաջադրանքն ունի՝ մշակել յարաբերութիւնները Հռոմի եկեղեցու հետ[3]:

Սակայն Խաչատուրի պատրիարքութիւնը տեւում է ամսից էլ պակաս: Նոյն Գալանոսը 1642 թ. օգոստոսի 25-ին գրում է Հաւատասփիւռի ժողովին, թէ Խաչատուրն արդէն իսկ գահընկեց է եղել եւ աթոռը գրաւել է Դաւիթը, հալածելով հանգուցեալ Կիրակոս պատրիարքի եղբօրը՝ Կարապետ վարդապետին, որը փախչելով ուզում է ապաստանել Հռոմում[4]: Դաւիթ պատրիարքը չի համարձակւում բացայայտ հալածել Գալանոսին, որովհետեւ պատկառում էր Դիարբեքիրի ծերունի Յովհաննէս արքեպիսկոպոսից, ինչպէս նաեւ նախկին Խաչատուր պատրիարքից եւ մի շարք ակնառու անձանցից[5]:

Հաւատասփիւռի ժողովը Խաչատուրի ընտրուելու լուրն առնելուն պէս, առանց նրանից նամակ ստանալու, 1642 թ. դեկ-

1 Տե՛ս Archivio Storico della S. Congregazione de Propaganda Fide (այսուհետեւ՝ AP), Scritture Originali riferite nelle Congregazioni Generali (այսուհետեւ՝ SOCG), vol. 167, f. 149.

2 Տե՛ս SOCG, vol. 167, f. 163.

3 Տե՛ս SOCG, vol. 167, f. 324.

4 Տե՛ս SOCG, vol. 168, f. 323.

5 Տե՛ս Կղեմէս Գալանոսի նամակը Հաւատասփիւռի ժողովի քարտուղար Ինկոլիին (SOCG, vol. 168, f. 328+331).

տեմբերի 6-ին գրում է ողջոյնի գրութիւն, շեշտելով յատկապէս նրա Հռոմի հանդէպ ունեցած բարի տրամադրութիւնները, մաղթելով որ լոյսի նման ճառագայթի իր շուրջը՝ բոլորին կաթողիկէ ճշմարիտ հաւատքի մէջ հաստատելու համար[6]: Նոյն թուականով մի այլ նամակ էլ ուղարկւում է Գալանոսին, յորդորելով որ թէ՛ Յովհաննէս արքեպիսկոպոսը եւ թէ՛ Խաչատուր պատրիարքը ստորագրեն հաւատոյ դաւանութիւնը եւ Հռոմ ուղարկեն[7]:

1642 թ. փետրուարի 4-ին Գալանոսը տեղեկացնում է Հաւատասփիւռի Ժողովի կարդինալներին, թէ Խաչատուրը վտարուած է Պոլսից[8]: Դաւիթը տեսնելով, որ Խաչատուրին յաջողուել է Պոլիս վերադառնալ եւ միանալ Տիվրիկի Պօղոս եպիսկոպոսին, ու ջանքեր գործադրել իրեն գահընկեց անելու եւ իր տեղը Թոմաս Բերիացուն դնելու, 500 ոսկի տալով թուրքերին՝ ընդմիշտ վտարում է Խաչատուրին քաղաքից: Միաժամանակ սկսւում են հալածանքները Գալանոսի դէմ, իբրեւ հայերի մոլորեցուցիչ: Մի հայ լրտեսի առաջնորդութեամբ պաշարում են Գալանոսի կեցավայրը: Գալանոսը հետապնդուելով փախչում է տնից: Լուր է տրւում Ֆրանսիայի դեսպանին, որի պատուիրակները յաջողում են կաշառել Գալանոսին հետապնդողներին եւ Գալանոսին յաջողւում է ապաստանել դեսպանատանը, յաջորդաբար Հռոմ անցնելու համար[9]:

Ժամանակագրօրէն ճիշտ նոյն օրերին է վերաբերում Խաչատուրի կողմից 1642 թ. յուլիսի 24 թուագրուած ու կնքուած կարծիք-գրախօսութիւնը եւ լատին թարգմանութիւնը Գալանոսի Քերական եւ տրամաբանական ներածութիւն գրքի սկզբում (տպագրութիւնը՝ Հռոմ, Ուրբանեան տպարան, 1645): Խաչատուրը կարծիք-գրախօսութեան մէջ, ի պատասխան «ի մեծն Հռոմ տպագրել զայսպիսի գործս առ ի յօգտութիւն ընթերցողաց մերայնոց» *յորդորանքներին, վկայում է, որ Գալանոսի աշխատութիւնը* «Է՛ գործ ամենեւին անսղալ. որ վայելչաբար եւ ճշմարտապէս ուսուցանէ զմեր լեզուս եւ զայլ բանս: Մինչ զի եւ ես իսկ ո՛չ սակաւս ուսայ սորա ընթերցմամբ: Նա եւս լուսաւոր հոգի Կիրակոս վարդապետն (երեւանցի) որ նախ քան զիս էր Պատրիարգ հայոց Կոստանդնուպօլսի՝ խիստ հաւանեալ էր գործոյս այսմիկ» *որի նկարը հրատարակում ենք այստեղ, ամբողջացնելով Խաչատուրի պատրիարքական շրջանը:*



Խաչատուրը «Սսի կաթողիկոս»

Խաչատուր Գ. Գաղատացու՝ որպէս Սսի կաթողիկոս, ընդարձակօրէն անդրադարձել է Բաբգէն Ա կաթողիկոս Կիւլեսերեանը «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» աշխատութեան մէջ[10]: Ապա, պարա-

6 Տե՛ս AP, Lettere volgari, vol. 21, f. 115.

7 Նոյն տեղում, f. 113.

8 Տե՛ս SOCG, vol. 168, f. 315.

9 Cl. Galano, Concil., Ia, f. 181.

10 Տե՛ս **Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոս**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441էն մինչեւ մեր օրերը)*, երկրորդ հրատարակութիւն, Անթիլիա-Լիբանան, 1990, էջ 370-410: Կիւլէսէրեանը այս աշխատութիւնում յիշատակում է Ալիշանի

գանների բերումով նաեւ Մ. Վրդ. Թերզեանը, հրատարակելով փաստաթղթեր Հաւատասփիւռի ժողովի դիւանից[11]: Նկատի ունենալով այս երկու աշխատութիւնները, ստորեւ մէջբերելու եւ քննելու ենք նոր աղբիւրներ ու չշրջանառուած վկայութիւններ Հաւատասփիւռի ժողովի դիւանից:

Խաչատուր կաթողիկոսը եւ տէր Յովհաննէս Ապտալը

Խաչատուրը Հալէպում 1657 թ. կաթողիկոսական Աթոռը գրաւելով, եթէ պարզ խօսենք, կարիք ունէր լատինների օժանդակութեանն ու նպաստին, որպէսզի հաստատուն մնար իր աթոռին, հաշուի առնելով վերջիններիս կշիռը: Ժամանակի պատմութիւնը դիտարկելով, տեսնում ենք որ ամեն կաթողիկոսի կամ հոգեւոր առաջնորդի կողքին առկայ էր իր հակաթոռը ու միեւնոյն անձնաւորութիւնը զանազան անգամներ նստում եւ ընկնում էր աթոռից: Նրանցից շատերը անհրաժեշտօրէն դիմում էին տարբեր ցանցային կառոյցների ու մարդկային հնարքների՝ ամրապնդելու իրենց դիրքը:

Տէր Յովհաննէս Ապտալը, որին առանձին կ'անդրադառնանք, հաստատում է մեր խօսքերի հաւաստիութիւնը, պատմելով մեզ իր անձնական փորձառութիւնը: Տէր Յովհաննէսն այն անձն էր, որ նախկինում, 1641 թ., Պոլսում եղել է Կիրակոս պատրիարքի սիրելի աշակերտը, որ Գալանոսի Պոլիս ժամանելուն պէս յանձն է առնում 22-ամեայ Յովհաննէսին, որպէսզի կատարելագործի իր ուսումը: Յովհաննէսի ընկերն ու դասակիցը Խաչատուրն էր, Կիրակոս Երեւանցի պատրիարքին յաջորդողը: Ուստի Յովհաննէսը իբր Խաչատուրին նախկինում ծանօթ, նրան կրկին անգամ հանդիպում է Հալէպում, այս անգամ ընկերոջը տեսնելով կաթողիկոսական տարազով:

Ունենք Տէր Յովհաննէսի անթուակիր մի նամակը[12], որի բովանդակութիւնից դատելով պէտք է գրուած լինի 1657 թուականից յետոյ եւ 1661 թուականից առաջ: Նամակը շահեկան է նոյն օրերի իրադարձութիւնների վրայ լոյս սփռելու համար: Փորձենք որոշ հատուածը բերել թարգմանաբար. «Հայ միսիոներ Տէր Յովհաննէս Ապտալը, խոնարհաբար տեղեկացնում է վսեմաշուք կարդինալներիդ, թէ Հալէպի յարգելի միսիոներ Հայրերն եւ Ֆրանսիայի դեսպան Պիքէն ինձ նամակով Երուսաղէմ կանչեցին. նամակով Երուսաղէմի միաբաններին թելադրելով, որպէսզի իրենց կարելին անեն եւ ինձ ուղարկեն Հալէպ: Հալէպ հասնելուս պէս դեսպան Պիքէն եւ միսիոներ հայրերը ինձ հրահանգեցին գնալ ու տեսակցել կաթողիկոսի հետ [Patriarca - իմա՛ Խաչատուր կաթողիկոս], որ իբր թէ բարի դիտաւորութիւններ ունէր Աստծոյ եկեղեցու հետ: Գրեթէ չուզենալով, հետեւեցի իրենց խորհրդին, որովհետեւ ի սկզբանէ գիտէի կաթողիկոսի ինչ տեսակ անձնաւորութիւն լինելը: Կաթողիկոսն ինձ ընդունեց յարգանքով, ինչպէս ընտանիքի ան-

մի վկայութիւնը Խաչատուրի մասին, վերցնելով այն «*Հայ-Վենետ*»-ից (էջ 179): Նոյն վկայութիւնը գտնում ենք Ալիշանի դիւանում, հետեւեալ կերպով. «Յաւելուածք ի Պատմութեան Առաքելի Դաւրիժեցւոյ. Թվ. ՌՃԶ (1657) Խաչատուր վարդապետն եղեւ կաթողիկոս փոքր մասին Հայոց ի տանն Կիլիկիոյ եւ յամի Քրիստոսի ... [դատարկ] առաջի Francesco Morosini, որ եղեւ դուքս Վենետկոյ եւ մարքէզին Villa, պատարագեաց ի Կրիտէ հանդիսապէս եւ պարգեւեաց marchesi Villa-ին զաջ մի սրբոյն Նիկողայոսի Խ-ից [Քառասնիցն], որ յուլիսի Է [7], բայց dubium (տարակուսելի) նշխարացն» (տե՛ս Ս. Ղազար, Ղեւոնդ Ալիշանի դիւան, *Հայկարան*, հտ. Զ, էջ 805):

11 Տե՛ս **Մեսրոպ Վ. Թերզեան**, *Խաչատուր Գ. Գաղատացի (1657 յունիս 17-1674)*,- «Արեւտիք», 1950, թիւ 11-12, էջ 204-207; *Խաչատուր Գաղատացի, Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ առ Աղեքսանդր Է. Պապ*,- «Արեւտիք», 1966, թիւ 11-12, էջ 132-134; *Խաչատուր Գ. Կաթողիկոս Գաղատացի*, - «Արեւտիք», 1967, թիւ 4, էջ 44-45:

12 Տե՛ս SOCG, vol. 225, ff. 18-19+22-23:

դամի եւ ցանկացաւ, որ եկեղեցում հագնեմ կրօնաւորական սքեմը եւ վեղարը, ինչպէս որ սովորութիւնն էր: Ուրբանեան վարժարանում մեր երդումը կատարելու ժամանակ մեզ ասուել էր, որ հայերը կարող են հագնել Ս. Անտոնի սքեմը, որ յատուկ է իրենց եկեղեցուն, ինչպէս յոյները՝ Ս. Բարսեղինը, ուստի առանց դժուարութեան ընդունեցի: Բայց նկատեցի որ կաթողիկոսի նպատակը դեսպան Պիքէից շօշափելի գումարի ձեռքբերումն էր եւ դրանից բացի այլ բանով չէր հետաքրքրուած: Ինձ բացարձակ կերպով արգելեց խօսել ի նպաստ կամ ի պաշտպանութիւն հռոմէական եկեղեցու, ապա թէ ոչ՝ չէր կարող գործերն յաջողացնել. ու յանձնարարեց որ ապրեմ այնպէս, որ հայերի մէջ տարակուսանքներ չարթնացնեմ կամ խռովութեան պատճառ չդառնամ: Երբ Հասան փաշայի կողմից [Հալէպի] պաշարումը վրայ հասաւ, եօթը ամիս ստիպուած մնացի իր մօտ, շատ նեղութիւններով ու հոգեկան տառապանքներով: Այդ եօթը ամիսներին ծածուկ կերպով իր հետ խօսեցի մի շարք նիւթերի, դժուարութիւնների եւ սխալների մասին: Իսկ ինքը [աստուածաբանական] հիմք չունենալով, Քրիստոսի մարդեղութեան, մեկ անձի մէջ երկու բնութիւնների անշփոթ միութեան, Աստծոյ էութեան անփոփոխելիութեան, բնութիւնների յարաբերութիւնների վերացական դաղափարները ցանկանում էր նիւթական կերպով հասկանալ: Տպաւորութիւնս այն էր, որ բաւական հասկանում էր, բայց քաղաքականութեան համար չէր ուզում անձնատուր լինել եւ որով անթիւ դժուարութիւններ էր ստեղծում եւ հարցումներ էր անում, ինչպէս հրեաների կամ այլ ոչ-կաթողիկէների սովորութիւնն է, որոնք որեւէ պատճառաբանութեան առաջ տեղիք չտալու համար՝ թողնում են եւ անցնում այլ պատճառաբանութեան: Ճիշտ է, որ ինքն հռոմէական եկեղեցու այնքան յամառ հալածողներից չէ: Ես կաթողիկոսին աշակերտակից եմ եղել Պոլսում, երբ Կղեմէս Գալանոսից սովորում էինք Քերականութիւն եւ Տրամաբանութիւն, բայց չի կարելի ասել թէ միութեան համակիր կամ պաշտպանող է: Այսօրուայ իր քաղաքականութիւնն էլ դա է պահանջում, պահելու համար իր վիճակը եւ կաթողիկոսական բարձրութիւնը, կանխելու խռովութիւններ ու առաջն առնելու ապստամբութիւնների: Իսկ եթէ հարցնում էք, թէ ինչո՞ւ քեզ չհաստատեց այդ բարձրութեան վրայ, ապա պատճառն հետեւեալն է. Հիւպատոս Պիքէն եւ յարգելի միսիոներները ուզում էին, որ ես բացայայտ ու համարձակ քարոզեմ հայերի սխալների դէմ եւ իրենք իմ այս գործս հռչակէին, օդում տարածելով, իբր թէ միութիւնը կատարուած է, որպէսզի գրէինք քրիստոնեայ Եւրոպային եւ ս. ժողովին՝ թէ կաթողիկոսը դարձի եկաւ եւ ընդհանուր եկեղեցու միութիւնը կատարուեց: Սակայն վտանգ կար կորցնելու ոչ միայն հարիւր հազար սկուդ, այլ նաեւ վիճակը, աստիճանն ու նոյնիսկ կեանքը, որովհետեւ կան հակառակ կարծիքի տէր կաթողիկոսները, եպիսկոպոսներն ու վարդապետները, որոնք ենթակայ լինելով Թուրքին, ենթարկւում էին մի շարք վտանգների: Ճիշտ այդպէս պատահեց Պոլսի յոյների պատրիարքին, որովհետեւ, ճիշտ կամ սուտը չի պարզուի, միայն ինքը գիտի, գտնուեց իր մեկ նամակը, գրուած կազակներին, վեզիրը բռնեց նրան ու կախեց՝ զգեստով ու վեղարով, վարդապետական գաւազանը ձեռքին, իսկ ժողովուրդը նախատուեց ու ենթարկուեց տուգանքների: Այստեղ կաթողիկոս, եպիսկոպոս կամ վարդապետ չի կարող վստահել ուրիշի, անձնական դիրքն ու վիճակի բարձրութիւնը այդ են պահանջում: Ես կարող էի ազնիւ դիւանագիտութեամբ վարուել, որպէսզի կաթողիկոսը գոհ մնար հիւպատոսից՝ գանձելով փափագածը եւ ես հասնէի պատիւների ու բարձրութեան, յոյսեր ներշնչելով, այնպիսի տպաւորութիւն թողնելով, որ իրենք հասնէին իրենց երազանքին: Սակայն խիղճս թոյլ չտուեց ինձ, որովհետեւ

կեանքիս ուրիշ նպատակ չունեմ, եթէ ոչ ճշմարտութիւնը եւ հաւատարմութիւնը, որ խոստացել եմ ս. Եկեղեցուն: Ի վերջոյ, կաթողիկոսը իր նպատակին հասած չլինելով այլ բան չարեց եւ երբ մեկնելու էր, ինձ ասեց.– Ուզո՞ւմ ես յետս գալ: Ոմանք, տեսնելով, որ հիւպատոսից չյաջողեցի (կաթողիկոսի համար) փափագած գումարը ստանալ, խորհուրդ տուեցին ինձ, ասելով, թէ եթէ իրեն ընկերանայի՝ տառապալից պիտի լինէր կեանքս: Պատասխանեցի, թէ ինձ հաճոյք պատճառած պիտի լինէր, եթէ ինձ թողնէր եկեղեցում, մինչեւ իր վերադարձը: Զուզեց, ասելով թէ՝ անկարելի է ինձ հայերի մէջ թողնել, երբ այս վիճակում եւ համոզումների մէջ էի, ու խորհուրդ տուեց, որ դառնամ Երուսաղէմ եւ կամ գնամ Եւրոպա: Ի վերջոյ, կաթողիկոսն ասեց, որ եթէ հիւպատոսը միջամտի եւ այս բանի համար փափագ յայտնի, կարող է զիջել, որովհետեւ կարող է արդարանալ հայերի առջեւ, որոնք եթէ տարակուսանք յայտնեն, թէ ինքն է հաւանութիւն տուել, կարող է պատասխանել, թէ հիւպատոսի յարգանքի պատճառով է ստիպուած եղել յանձն առնել: Սակայն, հիւպատոսն ուզեց որ իր տունը մնամ, ասելով, թէ ուզում եմ ցոյց տալ, որ եթէ ցանկանամ, ապա կարող եմ քեզ այստեղ պահել...»:

Այս երկար մէջբերուած հատուածից յայտնի է մի բան, թէ գոյութիւն ունէր եկեղեցական միութիւն իրագործելու ինչ ինչ ծրագիր, որ հաստատուած է ոչ թէ քրիստոսաբանութեան, այլ զուտ մարդկային որակների վրայ, լինի կաթողիկոսի, թէ լինի յատկապէս հիւպատոսի կողմից. ու թէեւ քաղաքական կացութիւնն էլ չէր թոյլ տալիս բացայայտ գործել, սակայն երբ լսւում է արծաթի ձայնը՝ նման եկեղեցական տեսակէտները ամբողջովին մթագնւում էին:

Տէր Յովհաննէս Ապդալը, որը Հռոմում իբր իր գործերի ներկայացուցիչ եւ գործակատար թողել էր իր ուսուցչին՝ Կղեմէս Գալանոսին, կանոնաւորապէս թղթակցում էր հետը, հաղորդելով իր ունեցած լուրերը: Այն շրջանում, երբ Հռոմը մտածում էր մի օգնական եպիսկոպոս նշանակել Լեհաստանի Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչին, Գալանոսը իբր թեկնածու առաջարկում է Զաքարիա Աղամին եւ կամ Յովհաննէս Ապտալին, թելադրելով, որ եպիսկոպոսական ձեռնադրութիւնն էլ կատարի Խաչատուր կաթողիկոսը, որ ինքնաբերաբար թելադրել էր Յովհաննէս Ապտալին նման ձեռնադրութիւնը, իսկ Յովհաննէսը մերժել էր, պատճառ բերելով պապից հրաման չունենալը, վախենալով որ յանկարծ ձեռնադրուի ոչ կաթողիկէ մի անձի կողմից: Այս մանրամասնութիւնը Գալանոսը յուշագրի ձեւով ներկայացրել է Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին, 1660 թ., սեպտեմբերի 6-ին, անշուշտ մանրամասնութիւններին տեղեկացուած լինելով հէնց Յովհաննէս Ապտալից[13]:

Խաչատուրը կաթողիկոսի թղթակցութիւնը Հռոմի հետ

Հալէպի լատին միսիոներների, ինչպէս նաեւ Ֆրանսիայի հիւպատոսի ամբողջ ջանքերը ուղղուած էին Արեւելքի եւ Հռոմի եկեղեցիների միջեւ միութիւն ստեղծելու եւ այս իրագործելու համար իրենց պատկերացմամբ երկու ճանապարհ կար: Առաջին՝ նամակներ գրել տալ պապին կամ ս. ժողովին եւ երկրորդ, աւելի ազդու՝ անձամբ ներկայանալով Հռոմ՝ հաւատոյ դաւանութիւն անել:

Խաչատուր կաթողիկոսի առաջին ինքնագիր նամակը, որ մեր տրամադրութեան տակ ունենք, կրում է 1662 թ. սեպտեմբերի 15 թուականը եւ ուղղուած է Աղեքսանդր Է. պապին[14]: Նամակն ունի եր-

13 Տե՛ս SOCG, vol. 221, f. 1-2.

14 Նամակի հայերէն բնագրին (տե՛ս AP, Collectanea Diversarum Provinciarum, Regnorum ac Natio-

կու մաս. առաջին մասում պապին տրւում են բոլոր տիտղոսները, այսինքն այնպէս ինչպէս պիտի գրէր որեւէ կաթողիկէ անձնաւորութիւն. «Պետ պանծալի եւ բարձրագոյն դիտապետ, Հայր հանուրց համայն ազանց քրիստոնէից ... երեսփոխան եւ տնտես բանին Աստուծոյ, գերագոյն իշխան եւ պսակ կաթողիկէ եկեղեցւոյ, իշխող եւ հրամանատու...»: Առաջին տիտղոսները թուարկելուց յետոյ, տալիս է նաեւ իր յարգանքի եւ խոնարհութեան տուրքը՝ գրելով՝ «Տէր իմ, Տէր, գտայց համարձակութիւն ի սուրբ Հօրէդ եւ խօսեցայց զանձուկ սրտի իմոյ. քանզի եւ եմք մի ի պասքելոց եւ ծարաւի՝ հոգեւոր աղբերացդ եւ տկարացեալ ամենայն կարգաց եւ սահմանաց հոգեւոր որդեակքս նուազ ազգիս Հայոց. նաեւ Հայր սուրբ, անառակ որդի քո, լոկ անուամբ առաջնորդ եւ կաթողիկոս Սսոյ եւ Տանն Կիլիկիոյ, Խաչատուր ծառայ ծառայիցն Աստուծոյ»:

Ապա ներկայացնում է ազգի վիճակը, տառապանքը, վիշտն ու նեղութիւնը, որ կրում է շրջակայ թուրքերից եւ «միշտ ի գերութեան եւ ի ծառայութեան կամք, եւս առաւել Անտոքու կողմանցս եւ Բերիոյ շրջակայիցս, Կիլիկիոյ եւ Սսոյ նահանգիս անտանելի եւ անասելի վիշտն եւ զնեղութիւնն, զոր կրեմք ի այլասեռից, զի կեղեքեն եւ կողոպտեն զքրիստոնեայս եւ զարիւնս ծծելով ոչ բաւականան անյագ գազրկի նման»: Ակնյայտօրէն, այս բոլոր շարադրութեան նպատակն է շարժել պապի ուշադրութիւնը, որ օգնութեան հասնի հայերին Ֆրանսիայի թագաւորի միջամտութեամբ: Անում է նաեւ գործնական թելադրանք, այն է «ի մերումս ժամանակի Ֆրանչիս Պիգէթն, որ այս կողմանս ի Հալապ գոնսուլ էր հրամանաւ մեծի արքային Ֆրանսացոց... աղաչեմ, աղաչեմ, ժտելով աղաչեմ զմեծի Տէրութիւնդ, զի հրամայես աստուածապսակ արքային եւ սուրբ թագաւորին եւ կրկին շնորհեցէք մեզ զՖրանչիս Պիգէթն, կամ ի Ստամպոլ կամ ի Հալապ, առ ի մխիթարել զտառապեալ ազգս եւ զստրուկ ծառայ ձեր»[15]:

Հայերէն այս նամակը թարգմանուել է իտալերէնի եւ կատարուել է նաեւ նրա համառօտութիւնը՝ պապի առջեւ ընթերցելու համար: Նոյնը ներկայացուել է Հաւատասփիւռի ժողովի 1663 թ. փետրուար 22-ի նիստին, ուր որոշւում է «Պատասխանել» նամակին[16]: Հռոմից գրուած պատասխան նամակի հետ, իբր ընծայ, ուղարկուած է մի սկիհ, որի համար Խաչատուր կաթողիկոսը յայտնում է իր շնորհակալութիւնը 1664 թ. նոյեմբերի 10-ի նամակով, ուղղուած ոչ թէ պապին, այլ Հաւատասփիւռի ժողովին[17]:

Այս նամակն էլ, նախորդի նման, սկսւում է տիտղոսների շռայլումով. «Երիցս երանեալք եւ երջանկացեալք եւ ի վեհագոյն գահս բարձրացեալք եւ Սուրբ ժողովք, որ բազմեալ էք ի գահն Հռոմայ. յԱթոռ սրբոյն Պետրոսի Առաքելոյն եւ վիմին հաւատոյ, ըստ հրամանի Տեառն»: Յայտ-

num, vol. 16, ff. 47v-48r) հանդիպել եւ «Ճոռոմաբան նամակ» կոչելով հրատարակել է Մ. Թերզեանը (տե՛ս «Աւետիք», 1966, թիւ 11-12, էջ 132-134): Նամակի իտալերէն թարգմանութեան երկու օրինակներ մեզ հանդիպեցին ինչպէս Հաւատասփիւռի ժողովի դիւանում, (տե՛ս SOCG, vol. 222, f. 206-207), այնպէս էլ Վատիկանի ձեռագրատանը (Barberini, Latino, ms. 7816, f. 43-44):

15 Նամակը գրուել է Ֆրանսուա Պիքէի դիւանագիտական առաքելութիւնն աւարտելուց եւ մեկնելուց յետոյ եւ նոր հիւպատոսի՝ Բարոնի ծառայութեանն ստանձնման պահին. «... արդէնս եղեալ գոնսուլ Պըրոնէն շնորհակալ եմք առաւելապէս, զի սա այլ զնորին շաւիղն ընթանայ եւ զնորին գործն կատարէ, զեկեղեցականս եւ զքրիստոնեայս միշտ եւ հանապազ մխիթարէ» (նոյն տեղում):

16 Տե՛ս AP, Acta Sacrae Congregationis de Propaganda Fide (այսուհետեւ՝ Acta), vol. 32, f. 40.

17 Նամակի հայերէն բնագիրը հրատարակել է Մ. Թերզեանը (տե՛ս «Աւետիք», 1967, էջ 44-45), վերցնելով բնագիրը Հաւատասփիւռի ժողովի դիւանից (տե՛ս SOCG, vol. 222, f. 97):

նում է, թէ «ի հերուն հետէ», փափագում է անձամբ գնալ Հռոմ՝ իր սիրոյ ողջոյնը տալու «փափուն եւ սուրբ ժողովոյն եւ եղբարցդ ամենայնի»: Հետաքրքրական է յատկապէս նամակի վերջին մասը, որտեղից յայտնի է դառնում թէ լատին միսիոներները ինչ աստիճանի էին թափանցել հայ եկեղեցու կեանքի մէջ եւ իբր տիրող անձեր կառավարում էին նոյն իսկ կաթողիկոսին: Խաչատուր կաթողիկոսը նուէր ստացած սկիհի համար շնորհակալութիւն յայտնելուց յետոյ, աւելացնում է. «աղաղակելով եւ ժտելով խնդրեմք ի սուրբ եղբարցդ, զի շնորհէք մեզ փոխանորդ եւ վէքիլ յայդ տեղդ զպատրի Ֆրանճիսգոսն ի Կարմէլիդեանց կարգէն, որ զմեր գիրն դա մատուցանէ սուրբ Հօրն եւ սուրբ Ժողովոյն եւ ի ձերումն սրբութենէդ առ մեզ եւ ուրախանամք բանիւ ձերով, որպէս մխիթարիմք յայսմ վայրի ի հոգեւոր եղբարցն մեր ի կրօնաւորացն որ են ի գաբուջեանց, ի կարմէլիդեանց եւ ի յիզվիդեանց, զի շնորհակալ եմք ի սոցանէ, մանաւանդ սինիօր Պ-[ա]ղոն ղօնսուլն, զի սոքա են սփոփիչ եւ մխիթարիչ մեզ եւ մերայինս ազգի»:

Այս նամակի հետ միասին, Խաչատուր կաթողիկոսը Հռոմ է ուղարկում իր հաւատքի դաւանութեան գիրը, կնքուած իր կնիքով, եւ որը կրում է 1664 թ. նոյեմբերի 10 թուականը[18]: Զենք բացառում, որ սա էլ արդիւնք է լատին միսիոներների միջամտութեան, որի աւելի զգալի եւ շօշափելի ապացոյցը Գրիգոր եպիսկոպոս Պիծակի ընտրութիւնը եւ ձեռնադրութիւնն է:

Լատին միսիոներները եւ Խաչատուր կաթողիկոսը

Բաբգէն կաթ. Կիւլեսերեանը խօսելով Խաչատուր կաթողիկոսի կեանքի մասին, մանրամասն եւ հետաքրքրական կերպով է նկարագրում թէ Խաչատուրը որքան է տանջուել իր հակառակորդ Դաւիթ Արեւելցուց, որ ինչպէս նախկինում Պոլսում յաջողել էր գրաւել պատրիարքական աթոռը, այժմ էլ ջանում էր գրաւել Սսի կաթողիկոսական աթոռը՝ հակառակ Խաչատուրի:

Խաչատուրի համար լատին միսիոներների եւ ֆրանսիական հիւպատոսի հետ մերձեցումը ինքնանպատակ չէր. այս ճանապարհով նա փորձում էր հաստատել ու ամրացնել իր աթոռը: Վերեւում տեսանք թէ ինչ էր գրում Յովհաննէս Ապտալը Խաչատուր կաթողիկոսի մասին: Նոյն նամակում Յովհաննէսը ցոյց է տալիս մի այլ բանալի եւս, գրելով. «Թուրքական պետութեան մէջ ոչ մի այլ տեղ այնքան տրամադրութիւն ու հակում չկայ դէպի հռոմէական եկեղեցին, ինչքան Հալէպում, ուր կան երթեւեկող բազում անձինք եւ երթեւեկի ազատութիւն, ինչ որ արդիւնք է այն վաճառականութեան շահերին որ տեղացիները ունեն ֆրանկներից»[19]: Լատինների գերակշիռ դերն ու ազդեցութիւնը պատճառ էր, որ հայն էլ մօտենար լատինին, իր շահերը պաշտպանելու համար, իսկ միսիոներները իրենց այդ դիրքը գործածում էին յօգուտ իրենց առաքելութեանը եւ միսիոնին, ժողովուրդներին առաջացնելով եկեղեցիների միութեան:

Մ. Թերզեանը գրելով Խաչատուր կաթողիկոսի մասին, յիշատակում է մի աղբիւր, որի համաձայն Խաչատուր կաթողիկոսը 1663 թ. մի քանի տարի առաջ «վեղարաւորների ցուցմունքով» քահանայ է ձեռնադրել Գրիգոր Պիծակին «ուրիշ 4-5 կաթողիկէ թեկնածուների հետ միասին»[20]: Սրա արձագանքը գտնում ենք ֆրանսիական հիւպատոս Պիքէի մի նամակում (որն այդպէս էլ չգտանք), զեկուցուած Հալատասփիւռի ժողովի 1660 թ. դեկտեմբերի

18 Տե՛ս SOCG, vol. 222, f. 285: Նամակի լատիներէն զոյգ թարգմանութիւնները տե՛ս նոյն տեղում, ff. 275+278 եւ f. 276

19 Տե՛ս SOCG, vol. 225, f. 19:

20 Տե՛ս «Արեւտիք», 1950, էջ 205:

14-ի նիստին, որի արձանագրությունը ասում է. «Հալէպի հիւպատոսը տեղեկացնում է թէ այնտեղի միսիոնը նուաճումներ է կատարում եւ թէ արքեպիսկոպոսը (իմա՛ կաթողիկոսը) հռոմէական ծէսով ձեռնադրել է երեք քահանաներ: Արքեպիսկոպոսը խնդրում է թոշակ իրենից ձեռնադրուած քահանաների համար, որոնք իրենց ծէսի համաձայն քառասուն օր մնալու են եկեղեցում: Ս. ժողովը նկատի է առնել տալիս հետեւեալը. եթէ հռոմէական ծէս ասելով հասկացւում է կաթողիկէ՝ համաձայն է, հակառակ պարագայում, եթէ հասկացուելու է լատին՝ այդ արգելուած է ս. աթոռի կողմից»[21]:

Այս արձանագրությունը իր ամբողջական բացատրությունն է գտնում Հաւատասփիւռի ժողովի դիւանում պահուած մի այլ մենագրութեան մէջ, որի հեղինակը Հաւանաբար Խաչատուր կաթողիկոսի նշանակած անձն է՝ «Պատրի Ֆրանճիսգոսն ի կարմէլիդաց կարդէ»: Գրութեան վերնագիրն է «Տեղեկագրություն. թէ ինչ պատահեց Գրիգոր հայ կաթողիկէ կրօնաւորի՝ Հալէպի հայոց վրայ արքեպիսկոպոս ձեռնադրելու ժամանակ», որ թէեւ անթուական է, սակայն Հաւատասփիւռի քարտուղարութեան կողմից նշանակուած է 1664 թ. հոկտեմբեր 25-ը, որ անշուշտ, համապատասխանում է Հաւատասփիւռի ժողովի նիստին ներկայացուած թուականին: Այս նիստին ներկայացուած թուականին: Այս գրությունը գրեթէ ամբողջությամբ թարգմանում ենք, ցոյց տալու միսիոներների ահռելի ազդեցությունը այս արարքի մէջ.

«Երբ տէր Յովհաննէս հայ միսիոնեը (իմա՛ Ապտալը) Հալէպից մեկնեց, Պոլը (իմա՛ Ապտալը) Հալէպից մեկնեց, ասից Հալէպ հասաւ հայոց կաթողիկոսը, առաջ տանելու համար Ֆրանսիայի հիւպատոս Փրանկիսկոս Baron-ի[22] եւ միսիոներների ծրագիրը. այն է՝ զօրացնել կաթողիկէ հատուածը: Կաթողիկոսը ձեռնադրեց երկու կրօնաւոր եւ եօթը քահանայ, որոնք ձեռնադրությունն ստանալուց առաջ միսիոներների կողմից կատարեցին կաթողիկէ հաւատքի դաւանությունն: Ապա նրանցից մեկը, Գրիգորը, յարմար նկատուեց, որ լինի Հալէպի արքեպիսկոպոս, որովհետեւ թէ՛ առաքինի էր եւ թէ՛ կարող. մանաւանդ որ Հալէպ քաղաքը տարուց աւելի էր որ հովիւ չունէր: Կաթողիկոսը հաւանեց առաջարկը, բայց Գրիգորը դեռեւս նոր աբեղայ ձեռնադրուած լինելով, չէր կարող իսկոյն եպիսկոպոս ձեռնադրուել: Նոյն օրերին կաթողիկոսը պիտի մեկնէր ստորին Հայաստան. խոստացաւ հետը տանել նաեւ Գրիգոր վարդապետին, որպէսզի նրան ցոյց տայ վանքերը, նրանց ապրելակերպը ու վերադարձին պիտի ձեռնադրէր եպիսկոպոս:

Կաթողիկոսի մեկնելուց առաջ ոչ-կաթողիկէ հայերը իրար միացած, գրեցին նոյն կաթողիկոսին, առաջարկելով իբր Հալէպի առաջնորդի մի վարդապետի, ասելով թէ ժողովուրդն էլ է համաձայն եւ թէ սա բարեկամ է միսիոներներին: Երբ լուրը միսիոներներին հասաւ, իսկոյն ծածուկ նամակ գրեցին կաթողիկոսին, որ 1663 թ. յունուար 27-ին Գրիգոր վարդապետի հետ շտապեց Հալէպ, վերջինիս Հալէպի արքեպիսկոպոս ձեռնադրելու համար: Երբ հայ ոչ-կաթողիկէները գիշերներով սկսեցին ժողովներ անել այս ձեռնադրությունը արգելելու համար, միսիոներները շտապեցրեցին եւ փետրուար 10-ին եկեղեցում մեծ հանդիսությամբ կատարուեց արարողությունը:

21 Տե՛ս Acta, vol. 29, f. 307, n. 18.

22 François Baron (1620-1683), Պիքէից յետոյ Հալէպի ֆրանսիական հիւպատոս, նշանակուեց Կոլբերի հրամանով 1661 թ. եւ պաշտօնավարեց մինչեւ 1670 թ.: Երեւում է նրա ծառայությունների շատ գոհ էր մնացել Կոլբերը, որի կողմից նա 1670-ից ուղարկուեց Հնդկաստան գլխաւորելու Արեւելահնդկական ընկերությունը: Մեռաւ Սուրաթում՝ 1683:

Կաթողիկոսը հանդիսաւոր կերպով մտաւ եկեղեցի եւ բազմեց իր գահին եւ ժողովրդին ասեց.- Դուք ոչխարներ էք առանց հովիւի. ուզում էք արքեպիսկոպոս: Այո՛,- պատասխանեցին: Կաթողիկոսը կանչել տուեց Գրիգոր վարդապետին եւ ասեց. Ահա այն անձը, որ փափագում եմ սահմանել ձեզ հովիւ, եթէ ասելիք ունէք՝ ասէք իր իսկ ներկայութեամբ: Կայծակի հարուածի էր նման, քանի որ ոչ-կաթողիկէները ոչինչ չկարողացան ասել, որովհետեւ տեսան որ կաթողիկոսն իրենցից ուժեղ է»:

Այստեղ սկսւում է ձեռնադրութեան արարողութեան նկարագրութիւնը, թէ զոյգ զոյգ առաջացան ռամիկն ու ազնուականը...: Ապա եկաւ Գրիգոր վարդապետը ու կաթողիկոսը մանրամասն հարցրեց հաւատքի մասերը, թէ ընդունո՞ւմ է երկու բնութիւնը Քրիստոսի մէջ... եւ այլն:

Յաջորդաբար շարունակւում է յաջորդող կիրակի օրուայ բուն ձեռնադրութեան արարողութեան նկարագրութիւնը. «ուր հրաւիրուեցին նաեւ միսիոներները»: Գրութեան վերջում, իբրեւ եզրակացութիւն, կատարուած է հետեւեալ արձանագրութիւնը. «Նկատելի է, որ այս Գրիգորը սկզբում ասել էր միսիոներներին, թէ ինքը որեւէ կերպ չի ուզում ստանձնել այս պաշտօնն ու պատասխանատուութիւնը, առանց նորին սրբութեան հրամանի եւ հաստատութեան. ընդունում է միայն այս պայմանով: Այնտեղ թէ՛ հիւպատոս Baron-ը եւ թէ՛ միսիոներները խոստացել են իրեն նորին սրբութիւնից ստանալ իր հաստատումը, իսկ Հաւատասփիւռի ժողովից էլ մի յատուկ կոնդակ»[23]:

Ձեռնադրութեան յաջորդ օրը, 1663 թ. փետրուարի 17-ով է թուագրւում Գրիգոր եպիսկոպոսի նամակը Աղեքսանդր Էպապին[24]: Այստեղ Գրիգորը բառացի կերպով կրկնում է վերեւում մէջբերուած գրութիւնը. «Յայտ լիցի բազմագութ հօրս մեր, որ ես անարժան եւ յունայնս ի բարի գործոց, Գրիգոր անուամբ քահանայ, եղեւ զի ձեռնադրեալ եղէ աստ ի Հալապ քաղաքի եպիսկոպոս ազգիս Հայոց, բարերար կամօք եւ ստիպմամբ սուրբ հարցն կրօնաւոր քահանայիցն, որք են առաքեալք ի սրբութենէդ Հռոմմէ ի կողմանս յայս, որ եւ են իսկ մեզ խոստովանահայրք եւ ծնան եւս բազում որդիս ի կաթուղիկէ սուրբ եկեղեցին բարի քարոզութեամբ. եւ եւս եղեն պատճառ ձեռնադրութեան մեր, զի բովանդակ ազատեսցի եկեղեցին ի հերձուածողաց: Բայց յիղձ նուաստի իմոյ աս է, զի ըստ առաքելաշնորհ իշխանութեան քում հաստատեսցես զիս ի հաստատութեանն սուրբ, զի յեցեալ ի սուրբ վէմն հաւատոյ՝ անշարժ մնասցին ուղղափառ որդիքս քոյին, Հայր սուրբ»:

Հաւատասփիւռի ժողովի 1664 թ. փետրուարի 4-ի նիստին զեկուցւում է Հալէպի Յիսուսեաններին կողմից Հռոմ ուղարկուած մի հաւատոյ դաւանութիւն «Arcivescovo armeno di Carcoa», արդեօք սա պիտի կարդալ «Arcivescovo armeno Carcour», թէ այլ անձնաւորութիւն է, դժուարանում ենք որոշել, սակայն անկարելի չէ նաեւ որ նոյն անձն է, որովհետեւ Գրիգոր եպիսկոպոսի անունը յաջորդաբար գրւում է նման ձեւով՝ «Carcour»:

Գրիգոր արքեպիսկոպոսի նամակի բովանդակութիւնից ելնելով, Հռոմում պատրաստւում է մի խնդրագիր, գրուած կարմեղեանների կարգի procuratore-ի կողմից, որ տեղեկացնելով Գրիգորի, իբրեւ Հալէպի արքեպիսկոպոսի ընտրութեան եւ օծման մասին, խնդրում է Հալէպում Ֆրանսիայի Franco Baron հիւպա-

23 Տե՛ս SOCG, vol. 222, f. 215-216.

24 Տե՛ս SOCG, vol. 222, f. 202: Նամակի հրատարակութիւնը, կատարուած Մ. Թերզեանի կողմից տե՛ս «Աւետիք», 1951, էջ 13:

տոսի եւ միսիոներների անունից, որ պապի կողմից տրուի հաստատութեան կոնդակ, որպէսզի «այդ ազգը Հալէպի մէջ ունենայ կաթողիկէ առաջնորդ ի դէմս Գրիգոր եպիսկոպոսի, որ հաւատոյ դաւանութիւնը ուղարկեց Հռոմ»[25]:

Հաւանաբար, Հաւատասփիւռի ժողովը իր պատասխանը ուշացրել է եւ կարմեղեան Procuratore-ն նոր խնդրանք է ներկայացրել, որ ամփոփուած է Հաւատասփիւռի ժողովին 1664 թ. հոկտեմբերի 7-ի նիստին. «Հալէպում հայ ազգի համար, միսիոներների ջանքերով եպիսկոպոս է ձեռնադրուել Գրիգորը, որ տիեզերական եկեղեցու գլուխ է ճանաչում նորին սրբութեանը, գրում է խնդրելով հաստատութիւն (վաւերացում)»: Ժողովի մասնակիցները ճշգրտում են, որ «չի ասում ո՞ւմից ձեռնադրուած լինելը, թող արտայայտուի ումից է ընտրուած եւ ձեռնադրուած»[26]:

Մինչ այս, Հալէպում, միշտ միսիոներների թելադրութեամբ եւ ուղղորդութեամբ, թէ՛ Խաչատուր կաթողիկոսը եւ թէ՛ Գրիգոր արքեպիսկոպոսը, շարադրում ու կնքում են երկու հաւատոյ դաւանութեան տեքստեր. առաջինը՝ 1664 թ. նոյեմբերի 10-ին եւ երկրորդը՝ 1664 թ. նոյեմբեր 12-ին: Նոյն թուականին է Խաչատուր կաթողիկոսի երկրորդ նամակը, ուղղուած Հաւատասփիւռի ժողովին, որի մասին վերեւում անդրադարձանք[27]:

Հալէպում միսիոներների գործերը առաջանում են շնորհիւ Ֆրանսիայի դեսպան Barone-ի, որ 1666 թ. յուլիսի 13-ին գրում է Հռոմ, տեղեկացնելով ի նպաստ կաթողիկէ եկեղեցու շարժման առաջացումը յոյներու, ասորիների «եւ մանաւանդ հայերի մէջ, որոնք լաւագոյն կերպով են տրամադրուած»[28]:



Գործերի առաջխաղացումը ենթադրում էր նաեւ դրամական միջոցների ներգրաւում, որի արձագանքն ունենք Հաւատասփիւռի ժողովի 1664 թ. նոյեմբերի 17-ի հետեւեալ արձանագրութիւնում, որը գրուած մի խնդրագրի համառօտութիւնն է. «Fr. Gioran Pietro մօրն Աստուծոյ, Հալէպի կարմեղեանների փոխանորդ, յոյն, հայ, ասորի կաթողիկոսների եւ Ֆրանսիայի հիւպատոսի խորհրդով, ստիպուած եղաւ մեկնելու Ֆրանսիա Eguillon-ի դքսուհուց[29] ողորմութիւն ստանալու, վճարելու այն պարտքերը, որ արել էին ոչ-կաթողիկէներից հալածուելու առիթով,

25 Տե՛ս SOCG, vol. 222, f. 212.

26 Տե՛ս Acta, vol. 33, f. 170, n. 48.

27 Խաչատուր կաթողիկոսի դաւանութեան գրի պատկերը հրատարակում են այստեղ, իսկ Գրիգոր արքեպիսկոպոսի դաւանութեան գրութեան բնագիրը հրատարակել է Մ. Թերզեանը (տե՛ս բնագիրը հրատարակել է Մ. Թերզեանը (տե՛ս **Մ. Թերզեան**, *Գրիգոր Բ Ատանացի*,- «Արեւելք», 1951, «Արեւելք», 1951, էջ 13-14):

28 Տե՛ս SOCG, vol. 222, f. 281-282.

29 Aiguillon-ի դքսուհին՝ Marie Madeleine de Vignerot du Pont de Courlay, Duchesse d'Aiguillon (1604-1675), կարդինալ Ռիշելիոյի քրոջ աղջիկն էր:

խնդրում է Ս. ժողովից յանձնարարական նամակ՝ ուղղուած նոյն դքսուհուն»: Ժողովի որոշումը լինում է գրել Ֆրանսիայի առաքելական նուիրակին, որպէսզի ս. ժողովին անունով յանձնարարական գիր ուղղի նոյն դքսուհուն[30]:

Խաչատուր կաթողիկոսը Հռոմում

Հալէպի միսիոներների եւ Հռոմի մէջ Խաչատուր կաթողիկոսի ներկայացուցիչ կարմեղեանի խնդրագրերը Հալէպում իբր առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի հաստատման մասին, չի հասնում իր նպատակին: Տեսանք որ Հաւատասփիւռի ժողովը ուզում էր ստուգել Գրիգոր արքեպիսկոպոսին ձեռնադրողի մասին տեղեկութիւնները եւ այսուհետեւ այլ արձանագրութեան չենք հանդիպում:

Երկու տարի յետոյ, 1666 թ. հոկտեմբերի 13-ին Խաչատուր կաթողիկոսն անձամբ է ներկայանում Հռոմ, նոյն այդ խնդիրը վերջնական կերպով լուծելու համար: Հռոմ հասնելով, Խաչատուրը Հաւատասփիւռի ժողովին է ներկայացնում Հալէպի Ֆրանսիական հիւպատոս Barone-ի 1666 թ. յուլիսի 13 թուակիր յանձնարարականը, ու նոյն թուականին կաթողիկոսը պէտք է սկսած լինի իր ուղեւորութիւնը, ու ինչպէս նաեւ ինքն է ներկայացնում մի ընդարձակ ու բովանդակալից խնդրագիր, պարզաբանելով իր ճանապարհորդութեան գլխաւոր պատճառը: Նախ յայտնում է որ Հալէպից ուղարկել է արդէն հաւատոյ դաւանութեան գիրը, եւ թէ որքան յոգնութիւն ու նեղութիւններ է կրել, Հալէպում մի կաթողիկէի արքեպիսկոպոս հաստատելու համար. եօթը եպիսկոպոսներ, որ է Այնթապի, Զէյթունի, Քերիպուսի, Հաճընի, Տիվրիկի, Ծամանդի եւ Սեբաստիայի եւ կաթողիկէ հինգ վարդապետներ, շատ քահանաներ, որոնցից 12-ը հաւատի դաւանութիւն են կատարել կարմեղեան միսիոներների առաջ իրենց մատուռում, ուրիշները՝ վեղարաւորների մօտ, որոնց միացան նաեւ ազգի գլխաւորներից: Խաչատուր կաթողիկոսը գրում է թէ որպէսզի ոչ-կաթողիկէները արգելք չհանդիսանան իր այս ուղեւորութեանը, շրջել է զանազան քաղաքներով եւ ապա Զմիւռնիայից անցել է Վենետիկ, ուր լաւ ընդունելութիւն է գտել քաղաքի պատրիարքից եւ առաքելական նուիրակից: Խաչատուր կաթողիկոսը այս ուղեւորութիւնը կատարել է իր որդիների եւ երկու թոռների՝ 12 եւ 7 տարեկան, ինչպէս նաեւ, իբրեւ թարգմանչի՝ իրենից ձեռնադրուած մի քահանայի հետ: Այս խնդրագիրն աւարտում է այսպէս. «Տարիքս առաջացած լինելով, փոխարինողիս էլ ապահովելու համար կաթողիկէ լինելը, Հալէպի թեմի համար ձեռնադրեցի Գրիգոր արքեպիսկոպոսին եռանդուն կաթողիկէ հաւատքի մէջ. խնդրում եմ որ պապից ստանաք նրա հաստատումը, ինչը պիտի լինի փառքը եւ բարգաւաճումը ս. եկեղեցու: Առ այս ունեմ Baron հիւպատոսի նամակը, գրուած Հռոմի իմ ներկայացուցչին»[31]: *Այս նոյն խնդրագիրը, տարբեր բառերով, բայց նոյն բովանդակութեամբ, Խաչատուր կաթողիկոսը ուղղել է նաեւ պապին*[32]: *Հաւատասփիւռի ժողովի 1666 թ. նոյեմբերի 29-ի արձանագրութեան մէջ այս խնդրագրի համառօտումից տեղեկանում ենք, որ կաթողիկոսը փոխանակ վարժարանի իջեւանել է Սբ. Մարիամ Եգիպտացուն կից Հայոց հիւրանոցը եւ պապական կարգադրութեամբ նրան տրւում է ամսական 15 սկուդ. «ասում է թէ գալու շարժառիթը պապին անձնապէս հնազանդութիւն յայտնելն է եւ թէ անցեալ տարի Հալէպից ուղարկեց հաւատի դաւանութիւնը եւ մենք փոխանցեցինք Հաւատաքննութեան ժողովին, նկատուեց, որ բանաձեւի մէջ մանր անկարգութիւններ կան*

30 Տե՛ս Acta, vol. 33, f. 175, n. 177.

31 Տե՛ս SOCG, vol. 222, f. 280+283.

32 Տե՛ս SOCG, vol. 222, f. 284+293.

եւ որով կրկին անգամ պիտի անել տան, ըստ ընկալեալ բանաձեւի...: Ֆրանսիայի Բարոն հիւպատոսը գրում է թէ կաթողիկէ հաւատքը Հալէպում արագ է տարածւում, յատկապէս ասորի պատրիարքի ձեռքով, որի արժանիքն է հայ կաթողիկէների մերձեցումը ս. աթոռի հետ»[33]:

Խաչատուր կաթողիկոսի հաւատոյ դաւանութեան մէջ ակնարկուած «մանր անկարգութիւններ»-ը մանր ճղճիմութիւններ են լատինների կողմից, որոնք այն կանխազգացումը ունեն, թէ արեւելցիները միշտ մոլորութեան մէջ են: Առանձին էջի վրայ կայ Խաչատուրի արած հաւատոյ դաւանութեան լատիներէն թարգմանութիւնը, որի լուսանցքում կատարուել են սրբագրութիւնները: Այստեղ բերում ենք շղագրով նշանակելով թելադրուած սրբագրութիւնները. 1. «դաւանիմ զամենայն զոր ինչ պահանջէ կարգ հաւատոյ» - «...պահանջէ հաւատն». 2. «նոյն ինքն ի բնութենէ Հօր» - «նոյն ինքն ի Հօրէ». 3. «Յուսամ յարութեան մեռելոց եւ ի կեանսն յաւիտենական որ գալոց է» - «յուսամ ի կեանս յաւիտենական եւ յարութեան մեռելոյ». 4. «աստիճան քահանայութեան» - «կարգն (Ordotantum)». «զինումն Աստուծոյ ճշմարիտ» - «զոհն Աստուած ճշմարիտ». 6. «Եւ ամեն մաս (իմա՛ Հաղորդութեան) զոր ինչ բաժանեսցի ի պատահմանցս ի բազում մասունս» - լուսանցքում գրուած է՝ «իմաստ չունի»: Ապա քննիչը իր դիտողութիւններն արձանագրել է նոյն թղթի վրայ. «Այս բանաձեւը, լուսանցքի սրբագրութիւններով, կաթողիկէ է, սակայն Ս. աթոռը արեւելցիների համար սահմանել է յարմարագոյն մի բանաձեւ, ուր դատապարտւում են իրենց սխալները. կարելի է այս երկրորդը պահանջել կաթողիկոսից»: Այս դիտողութեան տակ ստորագրել է Հաւատաքննութեան պաշտօնեայ «G. Marescottus», 1666 թ. նոյեմբերի 18-ին[34]:

1666 թ. դեկտեմբերի 20-ի նիստին Հաւատասփիւռի ժողովի կարդինալները կրկին անգամ քննում են Խաչատուր կաթողիկոսի առաջարկը եւ նկատի են առնում մի կարեւոր կէտ: Խաչատուրը փափագում է, որ Գրիգոր եպիսկոպոսը հաստատուի իբր Հալէպի առաջնորդ, կաթողիկոսի մահից յետոյ յաջորդութեան իրաւունքով, սակայն հայոց մէջ կաթողիկոս ընտրելու իրաւունքը պատկանում է ժողովրդին. սակայն Խաչատուր կաթողիկոսը պնդում է թէ դիմելու է Պոլիս օսմանեան Դռանը հաստատելու համար Գրիգորին իբր յաջորդ կաթողիկոս: Ժողովը որոշում է «դիմել պապին որպէսզի բարեհաճի Կիլիկիոյ եւ Փոքր Հայքի կաթողիկոսին իբր օգնական հաստատել Սիրիայի Հերապոլսի Գրիգոր արքեպիսկոպոսին, որ վստահելի անձանց կողմից վկայւում է իբր արժանաւոր անձ»[35]: Ս. ժողովի որոշումն ու առաջարկը բանաձեււում են եւ 1666 թ. դեկտեմբերի 23-ին կարդում պապի առջեւ, որ տալիս է իր հաւանութիւնը, որպէսզի գրուի պապական վճիռը[36]:

Պապի հաւանութիւնն ստանալուց յետոյ՝ ս. ժողովի պաշտօնէութիւնը ձեռնարկում է գործը: 1667 թ. յունուար 10-ի նիստին որոշւում է նոր անձը՝ D. Antonio de Flore-ը, կոնդակի շարադրողը, հնի՝ Giovanni Deutroluch-ի փոխարէն, «հանրածանօթ պատճառով»[37]: Կոնդակի առնչութեամբ կատարւում է թղթակցութիւն ներքին պաշտօնէութեան միջեւ[38] ու վերջապէս 1667 թ. մարտի 9-ին տրւում է լատիներէն եօթ էջանոց Աղեքսանդր Է. պապի երկար կոնդակը, ուր Գրիգորը, տիտղոսով Երա-

33 Տե՛ս Acta, vol. 35, f. 320, n. 26.

34 Տե՛ս SOCG, vol. 222, f. 287+288.

35 Տե՛ս Acta, vol. 35, f. 330, n. 7.

36 AP, Udienze, vol. 1, f. 1.

37 Տե՛ս Acta, vol. 36, f. 1, n. 2.

38 Տե՛ս SOCG, vol. 222, f. 124-125.

պոլսի արքեպիսկոպոս, կարգւում է Խաչատուր կաթողիկոսի օգնական[39]: Խաչատուր կաթողիկոսի այս նպատակը, որի համար Հռոմ էր հասել, կատարուած էր, այնուհետեւ պատրաստւում է մեկնել իր աթոռը, վերջին մանր գործերը Հռոմում հոգալուց յետոյ: Խնդրում է ունենալ «Տոմար Գրիգորեան»ի, Գալանոսի «Պատմութեան» եւ «Քերականութեան» հատորները[40], յատկապէս վերջինը, որի առաջաբանի մէջ հրատարակուած իր կարծիք-գրախօսութիւնը տրուած էր իբր «Պոլսի պատրիարք»: 1667 թ. փետրուար 8-ի նիստում հրաման է տրւում ստանալու գրքերը: 1667 թ. մարտի 9-ին զեկուցւում է Խաչատուրի երկրորդ եւ երրորդ խնդրանքները, այն է՝ հետը բերած իր երկու թոռնիկներին Ուրբանեան վարժարան ընդունելու եւ իրեն անձնապէս թոշակ սահմանելու մասին, որովհետեւ մտածում էր կաթողիկոսութիւնից հրաժարուելու եւ աթոռը նորընտիր օգնականին յանձնելու մասին: Ժողովի մասնակիցները համաձայնւում են կաթողիկոսի զոյգ թոռնիկներին Ուրբանեան վարժարան ընդունելուն, սակայն մերժում են նրան ամսական թոշակ սահմանելը, աւելացնելով «Տեսնենք թէ ինչ ելք պիտի ունենայ օգնականի հարցի մասին Պոլսում ներկայացնելիք իր դիմումը»[41]:

Դարձեալ մի այլ խնդրագրով, Խաչատուր կաթողիկոսը շնորհակալ լինելով ձեռքբերուած կոնդակի համար, վստահեցնելով որ այս պիտի նպաստի կաթողիկէ հաւատքի տարածմանը, միաժամանակ խնդրում է, որ յանձնարարական նամակներ գրուեն Պոլիս, ֆրանսիական դեսպանին, այլ իշխանութիւնների, որպէսզի ձեռնտու լինեն իրեն նոյն հրամանագիրը կիրառելու համար: Խնդրում է նաեւ ճանապարհածախս, պապական ներողութիւններ եւ հոգեւոր շնորհքները իրեն եւ իր ազգի համար[42]:

1667 թ. ապրիլի 26-ի նիստին որոշւում է յանձնարարական նամակներ տալ, ճանապարհածախսի համար՝ 100 սկուդ, իսկ ներողութիւնների համար՝ դիմել պապին[43]:

1667 թ. մայիսի 20-ով թուագրուած մի ստացական հանդիպեցինք Հաւատասփիւռի ժողովի դիւանում, հետեւեալ բովանդակութեամբ. «Ես Խաչատուր կաթողիկոս զվերո[յ] գրեալ 50 ուսկութ ըռօճիկն ի վարպետ Կարլօին տալացու եմ»[44]:

Շուրջ ինն ամիս Հռոմում մնալուց յետոյ Խաչատուր կաթողիկոսն մեկնում է քաղաքից, հաւանաբար 1667 յունիսին՝ դէպի Վենետիկ:

Խաչատուր կաթողիկոսը Լիվոռնոյում (1667 թ. Յուլիս)

Հռոմից Վենետիկ գնալու համար, ամեն հայ, մանաւանդ ամեն եկեղեցական, նախ հանդիպում է Լիվոռնո, հանդիպելու տեղի հայերին եւ գաւազանապտուղով ճանապարհը շարունակելու համար: Խաչատուր կաթողիկոսն էլ անցնում է Լիվոռնոյով, ուր կային զոյգ եկեղեցականները՝ Տէր Բարսեղ Բարսեղեան կոստանդնուպոլսեցին եւ Տէր Յովհաննէս Հոլովը, որոնք իբրեւ կաթողիկէ եկեղեցու պաշտպաններ, արհեստ էին դարձրել Հռոմի աչքում ամբաստանել ամեն հայ եկեղեցականի, որ անցնում էր քաղաքով: Խաչատուր կաթողիկոսն էլ զերծ չի մնում յիշեալ զոյգի դատաստանից:

Տէր Բարսեղը Տէր Յովհաննէսի գրչութեամբ, ստորագրում են 1667 թ. սեպտեմբերին լատիներէնով գրուած մի նամակ, ուղղուած Հաւատասփիւռի ժողովի

39 Տե՛ս SOCG, vol. 222, f. 103-106.

40 Տե՛ս SOCG, vol. 222, f. 134.

41 Տե՛ս Acta, vol. 36, f. 118, n. 1.

42 Տե՛ս SOCG, vol. 222, f. 134.

43 Տե՛ս Acta, vol. 36, f. 91, n. 3.

44 Recapiti dell'anno 1667, առանց էջակալման:

քարտուղար Casanete-ի. «Այն ծեր կաթողիկոսը, այստեղ անթիւ առիթներով չարիքներ խօսեց կաթողիկէ եկեղեցու, պապի, նրա տուած վճռի մասին: Հազիւ Վենետիկ հասած բանադրեց այս մեր քաղաքի հայ կաթողիկէ քահանաներից մեկին, որ տարուց աւելի է այստեղ է. բանադրուողի անունը Տէր Յովհան է եւ ներկայումս գտնուում է ամենախեղճ վիճակում, որովհետեւ հայերը ոչ-կաթողիկէ լինելով, հետը յարաբերութիւններ չեն պահում, կարծելով որ տրուած բանադրանքը վաւերական է: Կաթողիկոսը այժմ գտնուում է Վենետիկում եւ թոյնով է լցուած կաթողիկէ եկեղեցու դէմ»[45]*: Այս նամակը գրուելու օրերին, Լեհաստանից Հռոմ էր ուղեւորուում Տէր Յակոբ Գրիգորենցը, որ Վենետիկում Խաչատուր կաթողիկոսին հանդիպած լինելով, Լիվոռնոյում Տէր Բարսեղի նամակի վերջում յաւելուած է տեղադրում.* «Ես տէր Յակոբս, ծառայ սրբազան Կօնկրկացիօնի, եկի Լեհաց երկրէն Վէնէտիկ, տեսանելով զԽաչատուր կաթողիկոսն անդ, մնացի ութ օր, մինչեւ տեղեկանալ զնորա ներքուստ հակառակութիւնն ընդդէմ հաւատոյ եւ յետ այնորիկ եկի Լիվորնա, այնքան չարութիւն լսեցի, որ ամենեւին ոչ է պարտ նորա ողորմիլ. ով որ նորա ողորմի՝ կօնկրկացիօնի դէմ է: Եւ առաւել աստ Լիվորնա մէկ ուղղափառ կայ, զնա նզովեր է, որ կոչի անունն սորա տօն Ճուվան, ահա ես շուտով կուգամ (Հռոմ) եւ մի ըստ միոջէ ծանուցանեմ. Յակոբ Գրիգորենց քահանայէ»:

Իրապէս Խաչատուր կաթողիկոսը Լիվոռնո գտնուած օրերին, 1667 թ. յուլիսի 30-ին գրել է բանադրանքի նամակ եւ յանձնել Լիվոռնոյի ազգայիններին: Նամակի բովանդակութիւնը հետեւեալն է.



«[կնքադրոշմ]

Քրիստոսի ծառայ
Խաչատուր կաթողիկոս ամենայն հայոց

Յիսուսի Քրիստոսի ծառայ Խաչատուր կաթողիկոս Փոքր մասին հայոց, յորմէ հասցէ գիր դառնութեան եւ բարկութեան ի վերայ չովանէս կարգընկէց պոռնկիդ, որ զանունս վերաձայնել տաս, տօն ճուան, որ է ճշմարիտ քահանայի անուն եւ դու ոչ ես քահանայ, այլ սատանա եւ որդի սատանայի, ով չար դժնեա, ի հայոց մէջն բան չունիս եւ հայոց հետն հաղորդութիւն չունիս, եւ ինչ հայ որ ընդ քեզ հաղորդի՝ մեղադրանօք է, վասն զի զկարգդ ուրացար եւ պոռընկեցար եւ աղմկասօր գոլով ոչ ունիս ընդ հայոց բաժին եւ ով ոք ի հայոց ընդ քեզ առ եւ տուր առնէ ինքն դատապարտեալ է յօրինաց եւ դու երերեալ եւ դեգերեալ շրջիս անմասն ի հայոց, մինչեւ սթափեսցես ի խելագարութենէդ. ոչ լեր: Գրեցաւ ՌՃԺԶխ յուլիս Լ:

Ով թաքցնէ զթուղթս՝ նզոված է»[46]

45 Տե՛ս SOCG, vol. 222, f. 116.

46 Տե՛ս SOCG, vol. 222, f. 118.

Յովհաննէս Հոլովն աւելացրել է՝ «alia menus»[47]:

Բանադրանքի այս նամակը տէր Բարսեղն եւ Յովհաննէս Հոլովը թարգմանելով ուղարկել են Հաւատասփիւռի ժողովին 1667 թ. սեպտեմբերի 12-ին, միասին դնելով մի բացատրական նամակ, պաշտպանելու համար իրենց անձնական դատը. «Ահա ձեզ ենք ուղարկում Խաչատուր կաթողիկոսի բանադրական նամակը, որ Լիվոռնո գտնուած օրերին գրել է եւ ասել է, որ իր Վենետիկ մեկնելուց յետոյ յանձնեն տէր Յովհանին: Բանադրեց, որովհետեւ միակ կաթողիկէ քահանան էր, որ հաւատքի նիւթերի վերաբերեալ վիճաբանում էր ոչ-կաթողիկէների հետ: Բանադրանքից յետոյ տէր Յովհանը մատնուեց խեղճութեան, իրեն հետ նաեւ մենք, որովհետեւ հայերը տեսնելով որ շատերը մեր մօտ են գալիս, սկսեցինք խռովել, վախենալով որ իրենք եւս կարող են բանադրուել: Պէտք է պատժել Խաչատուրին, որպէսզի չարիքի առաջն առնուի, որովհետեւ սա ուզում է Լեհաստան գնալ»[48]:

Շուրջ երկու տարի յետոյ, 1669 թ. Ապրիլի 19-ին, Տէր Բարսեղն ու Յովհաննէս Հոլովը դեռ նոյն տրամաբանութեամբ եւ աջ ու ձախ եկեղեցականներին սեւացնելուց յետոյ, չեն մոռանում յիշել Խաչատուրին. «Հռոմ են գալիս, հաւատոյ դաւանութիւն են տալիս, օրինակ՝ Առաքել (Երեւանի) եպիսկոպոսը եւ Խաչատուր կաթողիկոսը, սակայն խաբէութիւն է, որովհետեւ չեն մնում իրենց խօսքի վրայ»[49]:

1669 թ. յուլիսի 27-ին գրում են Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին. «Երկու տարի առաջ երբ Լիվոռնո եկանք, տեսանք որ հայերը՝ քահանայ, եպիսկոպոս կամ աշխարհական, իրենց յայտարարում են կաթողիկէ եւ ապա ուզածներն են անում եւ այստեղ դրամի համար, բոլորը լռում են, բայց մենք որ սովորել էինք կաթողիկէ հաւատքը, չէինք կարող լռել: Երբ մենք միջամտեցինք եւ սկսեցինք ասել թէ ինչո՞ւ առանց ջրի է պատարագում եւ կամ առանց Պիզայի արքեպիսկոպոսի հրամանի է մատակարարում ս. խորհուրդները, Սսի կաթողիկոսը մտերիմներով Վենետիկ փախաւ: Սա էլ պատճառ եղաւ, որ Լիվոռնոյի ժողովուրդը մեր դէմ ատելութեամբ լցուի: Պետրոս Սաֆարը, որ մինչեւ այդ դէպքերը մեզ բարեկամ էր՝ թշնամի դարձաւ»[50]: Շուրջ տաս տարի յետոյ, 1676 թ. յունուարի 9-ին, դարձեալ առիթը ներկայանալու պէս, Բարսեղը գրում է. «Եկաւ Խաչատուր կեղծ կաթողիկոսը, որին լաւ ճանաչեցի Լիվոռնոյի մէջ,- ու շարունակում է,- անաստուած էր, դրամ հաւաքեց եւ Թուրքիա գնաց, մեռաւ առանց կաթողիկէ լինելու»[51]:

Խաչատուր կաթողիկոսը Լիվոռնոյից ճանապարհը շարունակելով, հասնում է Վենետիկ, որտեղից 1667 թ. սեպտեմբերի 12-ին իտալերէնով նամակ է ուղարկում Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին, տեղեկացնելով, թէ սիրով է ընդունուել քաղաքի առաքելական նուիրակի եւ Պատրիարքի կողմից: Եւ որովհետեւ գուշակում է, թէ իր մասին մեղադրանքներ կամ ամբաստանութիւններ պիտի գրուէին Հռոմ, խնդրում է «մեզ սրտիցդ չհանես, որովհետեւ ուրիշ յոյս չունենք, կարեւորութիւն չտաս, եթէ որոշ թշնամիներ մեզ հակառակ խօսեն»: Իտալերէն նամակը կնքելուց զատ, ստորագրում է հետեւեալ կերպով. «Ես Խաչատուր կաթողիկոս, զվերոյ գրեալ

47 Հոլովն այս նամակն հայերէն օրինակել է եւ թարգմանել լատիներէն (f. 119) ու Հռոմ է ուղարկել իր 1667 թ. սեպտեմբերի 12-ի նամակով:

48 Տե՛ս SOCG, vol. 222, f. 117.

49 Տե՛ս AP, Scritture riferite nei Congressi (այսուհետեւ՝ SC) Armeni, vol. 1, f. 541-542.

50 Տե՛ս SC Armeni, vol. 1, f. 324-325.

51 Տե՛ս SOCG, vol. 457, f. 327-328.

գիրս գրել ետու վասն մօնսիկօր սկրդարին սուրբ կօնկրկացիօնին»[52]:

Իրապէս, Վենետիկից առաջին ամբաստանութիւնը, հաւանաբար գրգռուած Լիվոռնոյի վերոյիշեալ զոյգի գործունէութիւնից, 1667 թ. հոկտեմբեր 8-ին գրում է քաղաքի առաքելական նուիրակը. «Խաչատուր կաթողիկոսը, թէեւ հաւատոյ դաւանութիւն է կատարել Հռոմում ու նախապէս նաեւ Արեւելքում՝ միսիոներների առջեւ, Լիվոռնոյում ապացոյցներ է ներկայացրել թէ հաւատքին անկեղծօրէն չի յարել եւ շարունակում է ապրել իր նախկին սխալներին համաձայն. այստեղ էլ նոր ընթացքով է շարունակում քայլել, ցոյց տալով նոյն նշանները եւ իրենց եկեղեցում պահում է իրենց ծոմերը. նախապէս չգրեցի, որովհետեւ վստահութիւն չունէի»[53]:

Խաչատուր կաթողիկոսը նոյն թուի նոյեմբերին երեք նամակ է գրել Վենետիկից, առաջինը Հաւատասփիւռի ժողովի ծիրանաւորներին եւ յաջորդ երկուսը Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին: Առաջին երկուսը, 1667 թ. նոյեմբեր 12 եւ 19 թուակիր, գրուած են իտալերէն, կնքուած կարմիր մեծաղիր կնիքով եւ հայերէն ստորագրութեամբ. «Յիսուսի Քրիստոսի ծառա[յ] Խաչատուր կաթողիկոս, փոքր մասին Հայոց տանն Կիլիկիոյ»: Առաջին երկու նամակների բովանդակութիւնը շնորհակալական ցանկութիւններ են, Հռոմում եւ Վենետիկում գտած պատիւների համար, որոնց փոխարէն խոստանում է երբ վերադառնայ իր աթոռը, ծառայել հռոմէական հաւատքի ծաւալման համար, նոյն իսկ արիւն թափելու աստիճանի[54]: Երրորդ նամակը հայերէն լեզուով է, ուստի բերում ենք բնագիրը.



«Յիսուսի Քրիստոսի ծառա[յ] Խաչատուր կաթողիկոս փոքր մասին Հայոց տանն Ճիլիճիոյ, յորմէ ժամանեալ հասցէ յիսուսաւանդ ողջոյն սիրով լուստրիսիմօ պօնսիկօրիդ սուրբ կօնկրըացիօնին: Սիրով ծանիր սիրելի մեր զի ահա ողորմութեամբն Աստուծոյ հասաք ի Վէնէտիկ եւ տարակուսեալ կամք թէ որ կողմն գնամք եւ մեր տարակուսանաց պատճառն այս է, զի բազում յուսով եւ ուրախութեամբ դիմեցաք ծովով եւ ցամաքով եւ եկեալ հասաք ի Հռոմ ի հայրենի տունն մեր եւ ամենայն ազանց քրիստոնէից, որ ամենքն գան եւ մուրատ առնուն եւ գնան ուրախութեամբ եւ մեք ուրախութեամբ մտաք եւ տրտմութեամբ եւ լալով ելաք անմուրատ ի Հռոմա[յ], վասն այն զի մատի չափ գիր չունիմք, ոչ ի վաղճանեալ պապէն եւ ոչ ի նոր պապէն կամ ի սուրբ կօնկրկացիօնէն, որ ի ճանապարհ գնալն մեր ի քաղաքականին կամ ի ծովու վերա[յ] մեծամեծաց որ հանդիպիմք նա զգիրն ցոյց տամք եւ անցանիմք գնամք ի մեր ճանապարհն, զի եւ ես ինքնին գիտեմ որ այս իմ մեղացն էր. գոհութիւն Աստուծոյ, բայց շնորհակալ եմք ի ձեզանէ, որ այն քանի փողն որ տվիք զմեզ ի Վենետիկ հասոյց զմեզ եւ աստի հետէ այլվի Աստուած ողորմած

52 Տե՛ս SOCG, vol. 222, f. 113.

53 Տե՛ս SOCG, vol. 222, f. 114.

54 Տե՛ս SOCG, vol. 222, ff. 152, 153.

է. սուրբ կոնկրկացիոնն հաստատ մնայ եւ դուք ողջ կացէք տէրամբ եւ հոգով սրբով. ամէն»[55]:

Խաչատուր կաթողիկոսի նամակի ձեռագրով՝ «Հասնի ի Հռոմ ի Բրօբականտա ֆիտէն ի ձեռն պօնսիկօրին. Զաքարիա վարդապետն առնու գիրս եւ ի տէրն հասուցանէ. D. Zaccaria armeno. Roma»[56]:

Խաչատուր կաթողիկոսի Վենետիկում անցկացրած ամիսներին, երկու տեսակի վկայութիւններ են տրւում նրա մասին, թէ՛ դրական եւ թէ՛ ժխտական: Վերեւում տեսանք որ սկզբնական շրջանում, հազիւ Վենետիկ հասած, քաղաքի առաքելական նուիրակը ժխտական արտայայտուեց իր մասին Հաւատասփիւռի ժողովին, հոկտեմբեր 8-ի նամակում: Գուցէ այդ շրջանի համար լինի Միլանի արքեպիսկոպոսի, կարդինալ Litta-ի 1669 թ. Սեպտեմբերի 25-ի նամակի ակնարկը, որ գրելով Միլանից անցնող Երեւանի Առաքել եպիսկոպոսի մասին, ասում է. «երկու տարի առաջ Վենետիկում էլ էր շրջում մի հայ կաթողիկոս եւ առաքելական նուիրակը հրահանգ ստացաւ բանտարկելու իրեն, իսկ ես Հռոմում տեսել էի նոյն անձնաւորութեանը պատիւների մէջ»[57]:

Սրան հակառակ, Խաչատուր կաթողիկոսը Վենետիկից մեկնելուց առաջ, Վենետիկի նոյն առաքելական նուիրակը տալիս է բարի վկայութիւն 1667 թ. նոյեմբերի 12-

ին, գրելով. «Խաչատուր կաթողիկոսը թէեւ ծրագիր ունէր Լէոպոլսից անցնելով գնալ իր աթոռը, բայց պնդումիս վրայ նախընտրեց ծովային ճանապարհը եւ ձեր հրահանգին հետեւելով, անձամբ հետամուտ եղայ որ D. Gio. Batista նաւով մեկնի Զմիւռնիա: Փափագում էր Պոլիս գալ, անհրաժեշտ հրամանները ձեռք բերելու համար. ես չհակառակուեցի: Այստեղ եղած շրջանում, յաճախ այցելեց ինձ, ապահովացնելով ինձ իր կաթողիկէ լինելը, թէեւ իրենց եկեղեցում պատարագեց, ուր հերձուածողներն են այցելում: Գործածում է Հռոմում տպուած Խորհրդատետրը, ծածուկ կերպով դնելով ջուրը (բաժակի մէջ). Նոյնը արել է լատին եկեղեցիներում պատարագելու ընթացքում: Խնդրեց որ միջնորդեմ Հաւատասփիւռի ժողովիդ, որպէսզի իր մասին յանձնարարականներ գրուեն Հալէպի կարմեղականներին եւ վեղարաւորներին: Այս բոլորով հանդերձ՝ չի կարելի դատել ներքին տրամադրութիւնները, որովհետեւ կան

55 Տե՛ս SOCG, vol. 222, f. 107+110. Նամակը գրուել է նոյեմբեր ամսին, սակայն պակասում է ճշգրիտ օրուայ նշումը: Այս նամակին կից (f. 108v-109r) կայ նամակի ծրարը, որի վրայ նշուած է հետեւեալ հասցէն. «Հասցէ թուխթս ի ձեռն Բարսեղ վարդապետիս ի մեծն Հռոմ. - Al m^to Ill.^re et S. Sig. mio oss. il Sig. Barsic vescovo. Roma»: Սրա վրայ կայ նաեւ կարմիր մոմէ կնքադրոշմ «Քրիստոսի ծառայ Պետրոս», որ հաւանաբար Խաչատուր կաթողիկոսի գրագիրն էր: Ցիշեալ Բարսեղն, անկասկած, Բարսեղ վարդապետ Էրզրումցին է, որ նոյն թուականին Հռոմում էր: 108r էջում տե՛ս նաեւ նամակի լատիներէն թարգմանութիւնը:

56 Տե՛ս SOCG, vol. 222, f. 110v.

57 Տե՛ս SOCG, vol. 421, f. 385.

ոմանք, որ պնդում են թէ հայկական հերձուածող ծէսին է յարում»[58]:

Խաչատուր կաթողիկոսը Վենետիկից մեկնելուց յետոյ, ունենք մի դիւանական վաւերաթուղթ, կամ դիւանական ակնարկ իր մասին, տրուած Զինաստանի առաքելական նուիրակ՝ Հելիոպոլսի եպիսկոպոսի կողմից, որ իր կատարած ուղեւորութիւնից վերադառնալով, տալիս է հետեւեալ ընդարձակ ծանօթութիւնը, որ զեկուցուել է Հաւատասփիւռի ժողովի 1668 թ. նոյեմբերի 19-ի նիստին, որի արձանագրութիւնն ասում է. «Հալէպում կան 2.000 հայեր, որոնք ունեն Կիլիկիոյ Խաչատուր կաթողիկէ կաթողիկոսը, որ երկու տարի առաջ Հռոմ էր եկել եւ իբր կաթողիկոսական օգնական ընդունեց իր թոռնիկներից (իմա՛ զարմիկներից) մեկին: Սրանցից շատերը, քաջալերուած իրենց եպիսկոպոսներից, որոնք բոլորը կաթողիկէ են, գնում են խոստովանելու միսիոներների մօտ: Հելիոպոլսի եպիսկոպոսն ասում է թէ հայերից գտել է մեծ յարգանք եւ պատիւ՝ իրենց եկեղեցում եւ թէ հայերը սիրում են միսիոներներին»[59]:

Խաչատուր կաթողիկոսի մասին մեր դիւանական աղբիւրները պարզաբանելուց յետոյ, պատմութեան ամբողջականութեան համար յիշենք թէ Սսում եղած շրջանում, 1671 թ., մի յայտարարութիւն ունի ս. Հաղորդութեան մասին, որն ստորագրել են իր գործակից եպիսկոպոսներով եւ վարդապետներով[60]:

Խաչատուր Գաղատացու մահուան թուականը Մ. Թերզեանը համարում է 1674 թ., հիմնուելով Զմմառի դիւանի թիւ 331 ձեռագրում պահպանուած տեղեկութեան վրայ[61]:

58 Տե՛ս SOCG, vol. 222, f. 111-112.

59 Տե՛ս Acta, vol. 37, f. 285.

60 Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս **Raymond H. Kévorkian, Armèn Ter-Stépanian,** *Manuscrits arménien de la Bibliothèque nationale de France. Catalogue,* Paris, 1998, pp. 505-508: Փաստաթղթի լուսանկարը տե՛ս Arménie entre Orient et Occident. Trois mille ans de civilisation. Sous la direction de Raymond H. Kévorkian, Paris: Bibliothèque nationale de France, 1996, p. 193. Տեքստի հրատարակութիւնը տե՛ս **Կարապետ եպս. Ամատունի**, *Դաւանաբանական անտիպ էջեր ԺԷ. դարէն՝ Ս. Հաղորդութեան խորհուրդին շուրջ (ֆրասացի աստուածաբան Անթուան Առնոյի յարաբերութիւնները հայ եկեղեցականներու հետ),*- «Բազմավէպ», 1978, թիւ 1-2, էջ 112-117:

61 Տե՛ս «Արեւտիք», 1950, թիւ 11-12, էջ 207:

ԳՐԻԳՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱԴԱՆԱՑԻ (ՊԻԾԱԿ)

Խաչատուր կաթողիկոս գաղատացու Հռոմ կատարած գլխաւոր եւ միակ նպատակը՝ Գրիգոր եպիսկոպոսը, իրեն յաջորդութեան իրաւունքով, իրեն օգնական ունենալն էր: Տեսանք որ Խաչատուր կաթողիկոսին յաջողուեց Աղեքսանդր Է. պապից ստանալ 1668 թ. մարտի 9-ի յատուկ կոնդակն ու յանձնարարականներ, այն յոյսով, որ նոյնը պիտի յաջողուէր անել Պոլսում՝ Օսմանեան արքունիքում: Խաչատուր կաթողիկոսի վերեւում յիշատակուած Հաղորդութեան մասին յայտարարութեան ստորագրող եպիսկոպոսների շարքում Գրիգոր եպիսկոպոսը առաջին դիրքում չէ, իբր կաթողիկոսական փոխանորդ, այլ երրորդում. «Ես Գրիգոր արհիեպիսկոպոս մայրաքաղաքին Մելտինու»: Իսկ առաջին տեղում ստորագրել է «Ես Պօղոս վարդապետ եւ արքեպիսկոպոս Հայոց, Աթոռակալ Տեառն կաթողիկոսի Խաչատուր Հայրապետի, որ ի Սիս մայրաքաղաքի տանն Կիլիկիոյ»: Թւում է թէ Խաչատուրը չէր հասել իր նպատակին եւ կամ մեզ անծանօթ դժուարութիւնների է հանդիպել: Բաբգէն Կիւլեսերեանը խոստովանում է թէ քիչ բան գիտենք Գրիգոր եպիսկոպոս Ադանացու մասին ու նրա կաթողիկոսութեան շրջանը դնում է 1686-1693՝ թուականներին, չգիտենալով նաեւ մահուան թուականը:[62] Մ. Թերզեանը ջանում է ցոյց տալ թէ Գրիգոր եպիսկոպոս Պիծակը միշտ կաթողիկէ մնաց, որի համար էլ հալածանքների ենթարկուեց[63]:

Այն քիչ փաստաթղթերը, որոնք գտել ենք Հաւատասփիւռի դիւանում, ներկայացնում են Գրիգոր արքեպիսկոպոսին Հռոմում 1696 թ. փետրուար կամ մարտ ամիսներին: Հազիւ Հռոմ հասնելով, Գրիգորը Հաւատասփիւռի ժողովից խնդրում է մի շարք գրքեր, այսինքն՝ Կղեմէս Գալանոսի եռահատոր Պատմութիւնը, Խորհրդատետր, Քրիստոնէական վարդապետութիւն, Թովմաս Գեմբացի, Զեռնբացութիւն յերկինս, Յովհաննէս Հոլովի Քերականութիւնը, Նորագոյն ծաղիկ, Մանաւանդականք առարկութիւն, Հայկական բառարան[64]: Խնդրագիրը ներկայացնում է Հաւատասփիւռի ժողովի 1696 թ. մարտի 20-ի նիստին[65] եւ Մայիսի 26-ին ստանում է գրքերը, տալով ստացական ու ստորագրելով՝ «Ես Գրիգոր կաթողիկոս Սըսայ, զայս գրեանքս առի»[66]:

Հռոմում իր մասին ամբաստանութիւնները բազմապատկուած լինելով, Հաւատասփիւռի ժողովը չէր ուզում իրեն նկատի առնել, որով Գրիգոր կաթողիկոսը ստիպուած խնդրագիր է ներկայացնում հետեւեալ բովանդակութեամբ. «Սսի Հայոց Գրիգոր պատրիարքը, ջերմօրէն խնդրելով ձեր վսեմափայլ տէրութեանը, պարզաբանում է թէ Հռոմ է եկել բարեպաշտութիւնից մղուած եւ այցելելու սրբատեղիները: Խռովարարների զրպարտութեան պատճառով մերժուել է գերապայծառ քարտուղարի կողմից, որ ինքը վատ է հասկացուել: Խեղճ խնդրարկուն, ծեր լինելով, աւելի քան վաթսունամեայ եւ առաջացած տարիքի պատճառով երկար ճամփորդութեան նեղութիւններից անհանգիստ, դեռ իր ուխտը կատարած չլինելով, խնդրում է թոյլ չտալ խեղճ ծերունու հանդէպ այնպիսի վարմունք: Խնդրարկուն այլ բան չի խնդրում, եթէ ոչ

62 Տե՛ս Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոս, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, էջ 421-432: Հմմտ. նաեւ Մ. Թերզեան, *Գրիգոր Բ Ատանացի*,- «Արեւելք», 1951, էջ 13-20:

63 Տե՛ս «Արեւելք», 1951, էջ 13-20:

64 Տե՛ս SOCG, vol. 523, f. 363-364.

65 Տե՛ս Acta, vol. 66, f. 60, n. 20.

66 Տե՛ս SC Armeni, vol. 4, f. 397.

ժամանակ, որպէսզի կարողանայ ուժերը վերականգնել, իր ուխտը կատարելու եւ ճանապարհը շարունակելու համար»[67]: Այս անթուական խնդրագիրը ներկայացուում է Հաւատասփիւռի ժողովի 1696 թ. մայիսի 7-ի նիստին եւ Հաւատասփիւռի ժողովի նախագահը, կարդինալ Ալթիերին ցանկութիւն է յայտնում անձամբ իրեն տեսնելու[68]: Ամենայն հաւանականութեամբ, Գրիգոր կաթողիկոսը տեսնելով ամպերի կուտակումը գլխավերեւում, հրաման է խնդրում մեկնելու, կառավարելու իր եկեղեցիները, ուստի խնդրում է դրամական օգնութիւն[69], սակայն Հաւատասփիւռի ժողովի 1696 թ. յունիսի 4-ի նիստին ոչ միայն հրաման չի տրուում մեկնելու, այլ որոշւում է «դատ կատարել»[70]:

Գրիգոր կաթողիկոսը Հռոմ մտնելիս ընկերակցել էր Եւդոկիացի Յովհան եպիսկոպոս Սեբաստացուն եւ Մարաշի Յակոբ եպիսկոպոսին: Երբ դատական ատեան է կազմւում, հարցաքննւում են նաեւ այս երկու եպիսկոպոսները, որոնց յայտարարութիւնները Գրիգոր կաթողիկոսն մասին, գրի առնուած լինելով, բաւական լոյս են սփռում պատմութեան մութ կէտերի վրայ:

Յովհան եպիսկոպոսը (անուանւում է Թէոդորոս, հաւանաբար շփոթելով Եւդոկացի լինելու հետ), պատմում է թէ շուրջ կէս տարի առաջ, 1695 թ., Հալէպում ճանաչել է յիշեալ կաթողիկոսին, որին յաճախ հայցելել է, մինչեւ որ Հայր Անտոն միսիոները անդրադարձնել է տալիս Յովնանին շատ չյաճախել, քանի որ կաթողիկոսը իր անհաստատ ու փոփոխական վիճակով, թողել է կաթողիկոսական աթոռը (Սսում), եկել է Հալէպ, պարզապէս իր հանգստի ու շահի համար, իրեն յայտարարելով Հալէպի եպիսկոպոս: Կաթողիկոսական աթոռից հեռու գտնուելով, ժողովուրդը իր տեղը ընտրել է Աստուածատուր Նարին ոչ-կաթողիկէին: Գրիգորը այս դէպքից խռոված քահանայ է ձեռնադրել Յովհաննէսին, որ ամուսնացած մեկն էր եւ յաջորդ իսկ օրը նոյն մարդուն ձեռնադրել էր կաթողիկոս՝ ի նախատինք Աստուածատուր Նարինի, յայտատարարելով թէ պատրաստ է ձեռնադրել որեւէ մեկին, նոյնիսկ ժամկոչին, եթէ կամենայ: Յովհաննէսն հակառակ որ կաթողիկոս էր, վերադարձել է իր կնոջ մօտ, որից ունեցել է մի խառնածին զաւակ: Յովնան եպիսկոպոսը վկայում է Գրիգոր կաթողիկոսին հակառակ, որ կատարել է հաւատոյ դաւանութիւն, ապրում է իբր ոչ-կաթողիկէ ու այս ասուածին տալիս է հետեւեալ ապացոյցը:

Իսկենդերունի նաւահանգստում տէր Յովնանը եւ սեբաստացի Մխիթար սարկաւագը հանդիպել են Գրիգոր կաթողիկոսին, որ Մարաշի Յակոբ եպիսկոպոսի հետ Հռոմ էր ուղեւորւում: Կիպրոսում, մի օր, Ս. Մակարի վանքում, առաւօտեան ժամերգութիւնից առաջ, Գրիգոր կաթողիկոսը առանց պատարագելու ձեռնադրում է տէր Յովնանին եւ մի ուրիշ աբեղայի: Յովնան եպիսկոպոսը բողոքում է Գրիգոր կաթողիկոսի դէմ, որ արարողութեան ընթացքում կարդացել է նզովքները Լեւոն պապի եւ Քաղկեդոնի դէմ: Գրիգորը չի կարեւորում սա եւ Յովնանն էլ ներքուստ հաւանութիւն չի տալիս կարդացուածին:

Յովնան եպիսկոպոսը վկայում է թէ Գրիգոր կաթողիկոսը ամբողջ մի տարի չի պատարագել, բայց երկու անգամ ներկայ է գտնուել պատարագին, Կիպրոսում եւ Լիվոռնոյում, ուր պատարագել է Բեթղեհէմի Եղիա եպիսկոպոսը: Կիպրոսում ձեռնադրուած աբեղայից ստացել է 13 սկուդ, որի համար դժգոհել է:

Իսկ Մարաշի Յակոբ 23-ամեայ եպիսկոպոսը վկայում է թէ ճանաչել է Գրիգոր կաթողիկոսին, վեց տարի առաջ կատարել

67 Տե՛ս SOCG, vol. 524, f. 43.
68 Տե՛ս Acta, vol. 66, f. 95, n. 15.
69 Տե՛ս SOCG, vol. 524, f. 199.
70 Տե՛ս Acta, vol. 66, f. 123, n. 22.

է հաւատոյ դաւանութիւն, ջրախառն պատարագելով եւ զգուշանալով Լեւոնի եւ Քաղկեդոնի դէմ նզովքներ կարդալուց, սակայն յաջորդաբար տեսել է նրա պատարագելը անապակ գինիով եւ նզովքներ կարդալիս: Երբ Հալէպի առաջնորդ է ընտրւում Կիրակոսը, Գրիգորն այնքան է ջղայնանում, որ այնուհետեւ չի ուզում լսել կաթողիկէ անունը, քանի որ եպիսկոպոսներն ու հերձուածողները անցել էին նորընտիր առաջնորդի կողմը: Մարաշի Յակոբ եպիսկոպոսը վկայում է թէ Գրիգորը ձեռնադրել է վեց եպիսկոպոս, որոնցից երեքը՝ Հալէպում, այսինքն՝ իր զարմիկը՝ Ադանայի Յովհաննէս եպիսկոպոսը, Սիմոն՝ եպիսկոպոս Այնթապի, Նիկողոս՝ եպիսկոպոս Անգելի (Angheli), Կարապետ՝ եպիսկոպոս Ֆարնադի եւ ինքը՝ Յակոբ՝ Մարաշի եպիսկոպոս: Հռոմում գտնուած շրջանում (1696 փետրուար-յուլիս) պատարագել է միայն մեկ անգամ: Հիւանդութեան շրջանում Ս. Մարիամ Մագթաղենացու հայոց հիւրանոցից կամովին փոխադրուել է Յակոբ-Գրիգոր հայի տունը, ապրելով ազատ եւ երբ Ս. ժողովի անունից իրեն զգացնում են, դառնում է նախկին բնակավայրը, խոստանում է հնազանդուել՝ առանց հնազանդուելու, ասելով թէ ինքը կաթողիկոս է եւ մի երկրորդ պապ եւ թէ ս. ժողովը չի կարող իրեն հրամայել: Այս խօսքերը լսողները շատ լինելով, կարող են վկայութիւն տալ[71]:

Այս ամբողջ մանրամասնութիւնները զեկուցւում են Հաւատասփիւռի ժողովի 1696 թ. յուլիսի 3-ի նիստին, սակայն ոչ մի դրական որոշում չի ընդունւում[72]:

Սրան հետեւում է Գրիգորի մի նոր խնդրագիրը, ուր պարզաբանում է թէ 40 տարի ծառայել է ս. Եկեղեցուն եւ հասել է 75 տարեկան, հիւանդութեամբ եւ տկարութեամբ ծանրաբեռնուած, ու չկարողանալով դառնալ իր աթոռը, փափագում է մի որոշ ամսական թոշակով մնալու Հռոմում[73]: Հաւատասփիւռի ժողովի 1696 թ. սեպտեմբերի 10-ի նիստին ներկայացւում է խնդրագիրը, սակայն յետաձգւում է պատասխանելը[74]:

Վեց ամիս այս հիւանդագին վիճակը շարունակուելուց յետոյ, դարձեալ լսւում է Գրիգոր կաթողիկոսի ձայնը, որ միացած Մարաշի Յակոբ եպիսկոպոսին, երկու խնդրագրեր են ներկայացնում ս. Աթոռին, առաջինով պարզաբանում են թէ երկարատեւ հիւանդութեան շրջանում կորցրած լինելով մի աչքի տեսողութիւնը, շատ ծախսեր է քաշել, ուստի խնդրում է դրամական նպաստ եւ եպիսկոպոսական տարազ: Երկրորդով խնդրում է Յակոբ եպիսկոպոսի հետ վերադառնալ իր թեմը, փափագելով որ գրուեն յանձնարարական նամակներ Պոլսի ֆրանսիական դեսպանին եւ Հալէպի ֆրանսիական հիւպատոսին, որպէսզի իր վրայից անպակաս լինի նրանց հովանին[75]:

Հաւատասփիւռի ժողովի 1697 թ. ապրիլի 15-ի նիստին դրական պատասխան է տրւում առաջին խնդրագրին եւ լուութեան է մատնւում երկրորդը, չուզելով տալ պահանջուած յանձնարարական նամակները[76]: Իսկ 1697 թուականի մայիսի 6-ի Հաւատասփիւռի ժողովի նիստին, վերջին անգամը լինելով, զեկուցւում է Գրիգոր կաթողիկոսի եւ Յակոբ եպիսկոպոսի խնդրագիրը[77], որոնք ճանապարհածախս են խնդրում, քանի որ կաթողիկոսը «աղքատ է եւ հիւանդ»: Ժողովը համաձայնում է խնդրագրին, իմաստ բաւարարում է խնդիրքը[78]:

71 Տե՛ս SOCG, vol. 524, f. 278-280.

72 Տե՛ս Acta, vol. 66, f. 180-181, n. 9.

73 Տե՛ս SOCG, vol. 525, f. 29.

74 Տե՛ս Acta, vol. 66, f. 180, n. 9.

75 Տե՛ս SOCG, vol. 526, ff. 403, 404.

76 Տե՛ս Acta, vol. 67, f. 90, n. 4.

77 Տե՛ս SOCG, vol. 527, ff. 41, 42.

78 Տե՛ս Acta, vol. 67, f. 123, n. 11.

Վերջին փաստաթուղթը, որ Հաւատասփիւռի ժողովի դիւանում գտնում ենք Գրիգոր կաթողիկոսից, իր ինքնագիր մի յայտարարութիւնն է, 1699 թ. ապրիլ 18 թուակիր, ուղղուած Հաւատասփիւռի ժողովին, ի նպաստ եւ ի պաշտպանութիւն Մարաշի Յակոբ եպիսկոպոսի, որի կրածներն է ներկայացնում: Ստորեւ հրատարակում ենք Գրիգոր կաթողիկոսի այս նամակը:



Գրիգոր կաթողիկոսի նամակը Հաւատասփիւռի ժողովին (1699 թ. ապրիլ 18)[79]

Յիսուսի Քրիստոսի ծառայ Գրիգոր կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարգ սուրբ Երուսաղէմայ եւ սպասաւոր սուրբ Լուսաւորչի աթոռոյն, ժամանի գիր սրալրական եւ քրիստոսայդաւան եւ միարար եպիսկոպոսին Մարաշոյ առաջնորդին համար, որ այս ղատար չարչարաքին ջուր խառնելոյն եւ փափին անունն իշելոյն համար ես ի Տարսոն քաղաքն իքան ինքն գնաց իւր եպիսկոպոսարանըն, որ է Մարաշ եւ ես մնացի Տարսոն քաղաքն եւ զինքն տված էր փաշին ձեռքն թէ այս մարդս ֆռանկ է, զփափն անունն կու իշատակի եւ սուրբ պատարաքին ջուր կու խառնէ. եւ փաշան սուէր էր Գձ[300] տէկէնէ կէր զարկի եւ Գ[3] ամիս զնտան. ժողովորդն կոյէին որ ըսբանէր Յակոբ եպիսկոպոսն, տվաւ ԻԵՌ [25.000] ղուռուշն փաշային չըսբանէ եւ փաշան մալոյ եղեր էր զինքն բերաւ Ատանա ԻԵՌ[25.000] ղուռուշն առնելոյն ետոյ կո ասէր փաշան թէ կո ըսպանեմ եւ մեք այլ ժողովեցաք ՌԵձ[1.500] ղուռուշ տվիք փաշային եւ ազատ արաւ եւ վրան հոճաթ արաւ թէ Մարաշ կամ Հայոց եկեղեց չի մտանելոյ: Գնաց Թարսոս քաղաքն, այն տեղաց հայերն չու թողին եկեղեցին եւ գնացին մատնեցին դատաւորին, թէ այս մարդս ֆռա[ն]կ է եւ դատաւորն բռնեց ճ[100] ղուռուշ այն տեղն տվաւ. գնաց Կիպրոս կըղզին, այն տեղն այլ ԺԸ [18] ղուռուշ ճարամա տվաւ, ինքն մին ըստակ չունէր, սուրբ Երուսաղէմայ պատրիքն տվին եւ ազատեցին. Աստուած կենդանութիւն տա[յ] ղոսորին[=custod-ին] իւրեան շատ տէրութիւն արաւ եւ ղոսորն ականատես եղաւ, որ վասն հաւատոյ համար է ամէն քաշած չարչարանքն, այս Յակոբ եպիսկոպոսին Աստուծոյ սիրոն թող լինի, այս մարդոս լաւ տէրութիւն արէք, զէրէ շատ մարդ տեսայ ողափառ կո լինի՝ այսպէս էշկէրէ չի դաւանի. այս դաւանեցաւ էշքէրէ, շատ անոն հանեց եւ խիստ խիճ մնաց. ամէն:

Գրեցաւ գիրս ի քաղաքն Փայեաս. թվին ՌՃԽԸ ապրիլի ԻԸ եւ մին ըստակ պարդք չունի ամէն տեղ:

[Ծրարի վրայ]՝ Գընայ գիրս ի մեծն Հռոմք, ի սուրբ ժողովքին. ամէն:

[կնքադրոշմ]՝ Ծառայ Քրիստոսի Գրիգոր կաթողիկոս Հայոց Պատրիարք սուրբ Երուսաղէմի:

[կնքադրոշմի տակ]՝ Ես Գրիգոր կաթողիկոս ամենայն Հայոց. ես իմ ձեռոքս գրեցի:

79 Տե՛ս SOCG, vol. 534, f. 32: Նամակը քննուել է Հաւատասփիւռի ժողովի 1699 թ. օգոստոսի 11-ի նիստում: